

1852

h-56

4997-5005

28

z-56

2010


11


84


1

1996

B 2001







241

Կ-52 ԵՆՁՆԵՔՆՆՈՒԹԻՒՆ

Կ Ա Մ

ՔՆՆԵ ԻՆՔՁԻՆՔԻ ԹԵ ԱՐԴԵՕՔ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԵՍ

Թի որ դարձի չգտի . . . երկնից լուսաւոր  
բռնիւնը բնաւ պիտի չմտնէ :  
(Մարտ . ԺԷ . 3 :)

Ո Ո Ս Տ Ե Ն Դ Ն Ո Ւ Պ Օ Լ Ի Ս

Ի Տ Գ Ա Ր Ա Ն Ի Ա . Գ . Չ Ա Ր Չ Ի Լ Ի



1854

Handwritten text at the top of the page, possibly a title or header.

Handwritten text in the upper middle section of the page.

Handwritten text in the middle section of the page.

78032-43



1214-87



Ք Ն Ն Է Ի Ն Ք Օ Ի Ն Ք Դ

Թ Է Ա Ր Դ Ե Օ Ք

Ք Ր Ի Ս Տ Ո՝ Ն Ե՞ Ը Յ Ե Ս

Ս Ի Ր Ե Լ Ի Ը Ն Թ Ե Ր Յ Ո Ղ

Վարելի է որ աղէկ մը չհասկընաս դարձի գալ  
 ըսելն ինչ ըլլալը • անոր համար նախ և առաջ ջանք  
 պիտի ընեմ՝ Եստուծոյ օգնութիւնովն ու շնորհ-  
 քովը անոր Բնո-Նի-նը քեզի ցոյց տալու : Ո-  
 րովհետեւ կրնայ քու վիճակդ անանկ ըլլալ , որ  
 Եստուծոյ ողորմութիւնն ու շնորհքը ընդունելու  
 յոյս ունենաս՝ քու բնական վիճակիդ մէջ շա-  
 րունակած ատենդ ալ • ուստի երկրորդ բանը՝ դար-  
 ձի գալուն հարկա-որո-Նի-նը ցոյց տալը պիտի ը-  
 նեմ • և դարձի չեկած՝ դուն քեզ դարձի եկած  
 կարծելով , ամենավտանդաւոր ու հոգեկորոյս սխալ  
 մը չընելուդ համար դարչնի լեկաթին նշանները առջևդ  
 դնեմ պիտի : Բայց որպէս զի չըլլայ որ վտանգ  
 մը չտեսնելուդ համար՝ անվախութեամբ վտանգ չկայ  
 ըսելով քու ներկայ վիճակիդ մէջ շարունակելու  
 գոհ ըլլաս , քեզի պիտի ցոյց տամ անդարչնի-որո-ն  
 Նի-ա-որո-Նի-նը : Քու դարձի գալուդ ետեէն  
 ի յնալու համար՝ քեզ պիտի ոտք հանեմ , քանիմը  
 շարժա-Նի-նի-քեզի առաջարկելով : Այլ վեր-  
 ջապէս՝ թէ որ համոզուիս դարձի գալու կարօտ  
 ըլլալուդ վրայ , ու փափագիս անոր՝ քեզ պիտի

առաջնորդեմ անկիս սպանալո՞ւմ Տիգրային, որով և քու ներկայ և յաւիտենական փրկութեանդ :

Թ . Հիմա քեզի դարձի գալո՞ւն թնո՞ւթիւնը պիտի ցոյց տամ . ան որ դարձի դալ չէ, ու ան որ դարձի դալ է :

Քու Ժրիստոնէութիւնն դաւանելո՞ւք դարձի դալ չէ : Պօղոս առաքեալ կ'ըսէ «Չէ թէ խօսքով՝ այլ զօրութիւնով է» : (Թ Կորն . Դ . 20 :) Սարգիկէի ու Լաւողիկէի մէջ կային մարդիկներ՝ որ Քրիստոնեայ ըլլալ կը դաւանէին, և կենդանութեան անուն մը ունէին . բայց միայն անուն մը ունենալուն համար, Քրիստոս դատապարտեց զանոնք : (Յայտ . Դ :) :

Քու Տրոստո՞ւք ըլլալո՞ւք դարձի դալ չէ : Հատ մարդիկ մկրտուեցան, բայց սրբութենէ զուրկ էին : Չար Ենանիան ու Սափիրան՝ երկուքն ալ մկրտուած էին, բայց յանկարծական մահուամբ զարնուելով՝ իրենց մեղացը մէջ մեռան : Սիմոն Մոզը մկրտուած էր . և տակաւին մաղձի դառնութեան, և անիրաւութեան կապերու մէջ կը մնար : Ուր որ քրիստոնէութիւնը երկրի մը դաւանած կրօնքն է, քրիստոնեայ ըսուած շատերը՝ միայն անոր անունը ունին, ու չէ թէ Քրիստոսի բնաւորութիւնները :

Եղէի դաւանութեանս մը դարձի դալ չէ : Ե՛ր Գաստիարակութիւնը՝ քեզ կրնայ վայելուչ կերպով ազնուացընել քու կենցաղաւարութեանդ մէջ, բայց քու սիրտդ չկրնար փոխել : Յովաս շատ բարեպաշտ կ'երևնար իր ազգականին Յովհադային

կենդանութեան ժամանակը . բայց իր բարի դաստիարակը մէջ տեղէն վերնալէն ետև՝ շուտով իր ինչ հոգի ունենալը ցոյց տուաւ , ինքզինքը մէկէն ՚ի մէկ կռասպաշտութեան տալով : ( Դժուգ . ժբ : )

Արօնտին արարտին պարարտարո-խի-ննէրը ճշդ-դի-կասարելը , և ժրո-խեամբ բոլոր շնորհաց ճշոյնէրո-ն ներկայ գտնուելը , դարձի գալ չէ : Պօղոս՝ դարձի գալէն առաջ անգամ , կրնայ ըսել թէ խիտ օրինապահ աղանդին համաձայն կեանք վարեց , ու ամէն բանի մէջ աղէկ խղճմտանք ունէր և օրէնքին արդարութեանը նայելով , անմեղ էր : Փարիսեցիները՝ ընդհանրապէս այնչափ ճիշտ էին արտաքին բաներու մէջ , որ Հրէից մէջ հասարակաց բերանը առածի պէս եղեր էր՝ որ եթէ երկու հոգի միայն երկինքը երթալու ըլլան , մէկը փարիսեցիներէն պիտի ըլլայ . և տակաւին յայտնի է որ՝ մեր Տէրը անոնք գովելու տեղը , ըսաւ անոնց , վա՛յ , վա՛յ , վա՛յ , ձեզի :

Ե-ջէ հոլո-խի-ննէրէն ու պղծ-խի-ննէրէն , զգոտարո-խեանն ու կանոնա-որ լաւօր-նոյն ճի գոտ-նայլը , դարձի գալ չէ : Ապարը շատ տարբեր ձևերու կրնայ թափուիլ . և տակաւին մէկ ցած մտաղ մը ըլլալը կը մնայ : Եսանկ ալ մարդը կրնայ շատ փոփոխութիւն ստանալ , դրսուանց երևնալու կոշտ մեղքեր գործելէն բարեկարգութեան գառնալ , ու աշխարհի ապականութիւններէն փախչիլ , և տակաւին սիրտը նորոգուած չըլլալ : Հերովդէս ուրախութեամբ մտիկ ըրաւ Յովհաննէս մկրտիչին՝ և կը յարգէր անիկա , ու անոր բե-

բանը կը նայէր, և անկէ ըսելով շատ բաներ կ'ընէր. 'ի վերայ այսր ամենայնի դարձի գալու չհասաւ :

Մեղքի վրայ խորին զգացմամբ համապահար, և խղճմտանքին ոտք ու կակժեցողացի պանջանքը, դարձի գալ չէ՝ թէ որ անկէց առաջ չերթայ նոյն զգացմանց տէրն եղող անձը : Փարաւոն, Եքաաբ, Փիլիբոս, և Միմոն մոզը, և մինչև անգամ Յուդան՝ խղճմտանքի սաստիկ ահուդողին մէջն էին : Ես քաշած նեղութիւննին շատ անգամ անպտուղ կ'ըլլայ, ու դժոխքին նախկին մէկ ճաշակը կուտայ :

Ես պոռթոյ խօսքին զօրանքի քարոզողութեանն, կամ «Կախախնամողութեան մէկ հասնանքի պնտրեանութեանն պարտաւալ արտին սպողոս շարժմանքը, դարձի գալու կայանք չեն կրնար տալ : Եղէկ բաներու ետէ շատ զօրաւոր փափազ կարելի է որ ունենան, և նմանապէս ալ անոնցմէ մեծ զուարճութիւն զգան՝ մինչև անգամ դարձի չեկածները. ինչպէս որ ասանկ է ան մարդոցը վիճակը՝ որոնց համար Տէրը կ'ըսէ. «Մտնը ամէն օր զիս կը փնտռեն. և իմ ճամբաներս դիտնալու և Եստուծոյ մօտենալու կը փափաղին» : (Նսայ. ծր. 2 :) Եւ կարելի է որ մեծ ուրախութիւն ալ ունենան. մեր Տէրոջը պատմած ունկնդիրներուն պէս՝ որոնք ուրախութեամբ ընդունեցին խօսքը, բայց արմատ չունէին իրենց մէջը. ուստի նեղութեան ու հալածանաց ատենը չորցան :

Որովհետև ասանկ մէկ ամենակարեւոր նիւթի

մը մէջ չպիտի ուղէիր խաբուիլ, քննէ՛ թէ երկնից ու փրկութեան վրայով ունեցած յոյսդ ինչ բանի վրայ հիմնուած է : Քրիստոնեայ ըլլալ դաւանի՞րդ է, մկրտուած ըլլա՞լդ, կրօնական դաստիարակութիւնդ, զգաստութիւնդ, գործիդ մէջ աշխոյժ ըլլա՞լդ, առուտուրիդ մէջ արդար ու անխարդախ ըլլա՞լդ, կրօնական սարտաւորութիւններդ կատարե՞լդ, կամ երբեմն մտքիդ մէջ մեղքի վրայ ունեցած տրտմութիւնդ : Տէրօջը խօսքովը կրնամ հաստատ վկայել քեզի, որ աս ջատագովութիւնները Եստուծոյ ատեանին առջևը ընդունելի չպիտի ըլլան : Բոլոր ատ բաները՝ որչափ աղէկ ալ որ ըլլան, չեն ապացուցաներ որ դարձի եկած ես, ու քու փրկութեանդ բաւական չեն :

Բայց իրենք իրենց անձին համար այսչափ բան մը ըսելու կարող եղողները՝ թէ որ դարձի եկած չեն սեպուիր, հապա ի՞նչ պիտի ըլլայ բացէ՛ ի բաց ու յայտնի մեղաւորներուն վիճակը : Ա՛հ թէ որ դուն ասանկ մէկն ես, դիտնալու ես որ Եստուծոյ թագաւորութենէն հեռի՝ խիստ հեռի ես : Արնայ՞ ըլլալ որ մարդ մը քաղաքավարեալ ըլլայ, ու տակաւին դարձի եկած չըլլայ : Ուրեմն ո՞ւր պիտի երևնայ բացէ՛ ի բաց անաստուածը, և ծանր մեղքի մէջ եղողը : Արնայ՞ ըլլալ որ իմաստուն կոյսերուն հետ ընկերանայ մէկը, ու դուռնէն դուրս մնայ, և չպիտի յիմարներուն ընկեր եղողը, այսինքն մեղաւորներուն, ալ աւելի կորսուի : Թէ որ մէկը՝ իր ընկերներուն հետ ունեցած բոլոր գործառնութիւններուն մէջ ուղիղ և արդար ըլլալով,

տակաւին Աստուծոյ առջև չկրնայ արդարանալ և ուստի դուն ի՞նչ պիտի ըլլաս : Ո՛հ խորհէ՛ շուտով , և բոլորովին Աստուծոյ դառնալու վրայ և թէ ոչ անօրէնութիւնը քու կործանումդ պիտի ըլլայ : Տէրոջը ետեէն եղիք իր ներող և նորողող շունորհքը ընդունելու համար . և մի՛ դադարիր մինչև որ Աստուած կատարեալ փոփոխութիւն մը ընէ քու վրայ . վասն զի դուն ուրիշ մարդ մը ըլլալու ես , նոր մարդ մը Քրիստոսով . եթէ ոչ՝ յաւիտեանս կորուսեալ մարդ մը պիտի ըլլաս :

Բայց հիմա քեզի ցոյց տամ պիտի իսկապէս՝ թէ ի՞նչ է դարձի դալը :

Քո արարիչ Դէ՛ջ ընդհանրապէս փոփոխութիւն մը ըլլալու է , ու նաև քո կենացդ Դէ՛ջն ալ : Ես փոփոխութիւնը մարդուն մէջ բոլորովին կը թափանցէ . իր մտքին ու իր բոլոր վարուցը մէջ : Էին մարդը մէկդի հանուած է . նոր մարդը կը հազնի , ու բոլոր բաները նոր կ'ըլլան :

1 . Դարձի եկողին իմացապահանջութիւնը կը լուսարի , անանկ որ առեն մը խաւար եղողը՝ Տէրոջմով լոյս կ'ըլլայ : Երրորդոց գիտութեամբը կը լուսաւորի : Ենոր անարատ մաքրութիւնը , ու մեղքը կատարելապէս առելն ու անկէ զզուելը , և մեղքը պատժելուն կողմանէ անսահման արդարութիւնը , անոր անսահման գիտութիւնը՝ զօրութիւնը՝ և բարութիւնը , անոր ամենակարողութիւնը՝ և ուրիշ փառաւոր կատարելութիւնները , ինչպէս որ Սուրբ Գրոց մէջ յայտնուած են՝ զօրաւոր կերպով կը թափանձեն իր մտքին մէջ : Հիմա

ինքը կը տեսնայ անոնք՝ որ առաջ միայն լսած էր :  
 Իր իմացականութիւնը կը լուսաւորի նաև Ռդ-  
 փն դիտութեանը կողմանէ : Հիմա մեղաւորը  
 մէկ չափով մը՝ մեղքը բուն իր յատկութիւննե-  
 րովը կը տեսնայ՝ որ չարիքներուն ամենէն գէշն է,  
 ու չափազանց չար • Թէպէտև առաջ՝ միայն քիչ մը  
 չարիք կը տեսնար անոր մէջ : Ո՛հ ինչ այլանդակ  
 հրէշներ կ'երևան իր առջի սիրական ցանկութիւն-  
 ները : Թէ որ իր աջ աչուրները ըլլային, պիտի  
 հանէր • ու թէ որ աջ ձեռուրներն ալ ըլլային,  
 անոնք կտրելու հաւանութիւն պիտի տար : Ար  
 տեսնայ մեղքին մէջն եղած անտեղութիւնը, ա-  
 նիրաւութիւնը, և դարշելիութիւնը, ու Աստու-  
 ծոյ առջին որչափ ատելի և անարգելի ըլլալը, և  
 թէ՛ որչափ փնասակար ու ապականիչ է իր հոգ-  
 ւոյն • անանկ որ ինքը կը զարհուրի անկէ, կը  
 զղուի անկէ, ու կը փախչի • և ինք իր անձը մէկ  
 մեծ յիմարի մը տեղ կը դնէ՝ այնչափ երկար ա-  
 տեն Տէրոջը դէմ պատերազմելուն, ու իր ծոցը ա-  
 սանկ ապականիչ բանը պահելուն համար :

Իր իմացականութիւնը կը լուսաւորի ինքնին  
 դիտնալուն կողմանէ : Անառակը հիմա ինքիրեն ե-  
 կաւ • ու իբրև թէ ներսի դին անհամար աչք կը տ-  
 րած է • կը տեսնէ որ իր սիրտը չար է, ու անոր ախ-  
 տը գիտէ և կ'զգայ : Ար տեսնայ որ իր ինկած բնու-  
 թիւնը ինչպէս սաստիկ ապականեալ է : Աստուծոյ՝  
 և իր սուրբ օրինացը դէմ ինչ թշնամութիւն կայ  
 անոր մէջ, բոլոր իր կեանքին օրերը • ասոնք տես-  
 նելով՝ ալ ինք իրմէն կը զղուի : Ան որ իր ներսի

դին քիչ մեղք կար կը սեպէր առաջ ; ու Եստուծոյ առջև խոստովանելու արժանաւոր բան մը չէր գտներ՝ բաց ՚ի մէկ քանի յայտնի մեղքերէն) ; Տիմա կը տեսնէ իր բոլոր հոգւոյն մէջի խորին և ընդհանուր ապականութիւն . կ'զգայ որ իր սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ է ; և սաստիկ չար . անանկ որ ալ կ'սկսի կանչել . «Պիղծ , պիղծ եմ . ո՛վ Տէր լուս զիս բոլորովին իմ մեղքերէս ; ու իմ ներսի դիս մաքուր սիրտ մը ստեղծէ" : Բոլոր իր ըրածներուն վրայ պիղծ կը գրէ . կը տեսնէ իր սրտին մէջի անէծքը ; գողութիւնը ; սպանութիւնը և շնութիւնը ; որոնց վրայ տգէտ էր առաջ : Թէպէտև վտանգ մը չէր տեսներ առաջ ; բայց Տիմա իր յաւիտեան կորսուած ըլլալը կ'ըզբակացընէ՝ թէ որ շնորհաց զօրութեամբը չնորոգուի :

Եսկէ զատ իր միտքը կը լուսաւորի Քրիստոսի գիտութիւնովը : Մինչև Տիմա Քրիստոսի վրայ կերպարանք մը կամ վայելչութիւն մը ; ոչ ալ անկէ ախորժելու երևոյթ մը տեսաւ . բայց Տիմա Յիսուս Քրիստոսի վրայ մէկ գերազանց արժէք մը ; ու չափազանց փառք մը և վսեմութիւն մը կը գտնէ՝ որ բոլոր ստեղծուածներուն մէջ եղած գերազանցութիւնները կը մ'թնցընէ . ինչպէս որ արևը ելելուն աստղերը կը ծածկուին : Ընոր մէջ անսասման ճոխութիւն մը՝ որ բոլոր իր կարօտութիւնները լեցընելու բաւական է . իր անմահ հոգւոյն անսասման փափագները կատարելու բաւական . և աս բանը հաստատ որոշում ընել կու տայ իրեն :



որ Քրիստոսի՝ և միայն անոր հաւատայ, իբրև իր յաւիտենական բաժինը :

Հիմա իմ սիրելի ընթերցողս, քննէ դուն քեզ • փորձէ քու սիրտդ : Երդեօք քու մտքդ ալ աւսանկ լուսաւորուած է : Իմ հիմակուան խօսած բաներուս փորձառութիւն ունի՞ս :

2. Գարձի եկողին կաճար կը նորոգուի, և Եսայիայի կամայք կը հօգտարակի : Որ և իցէ աղէկ բան մը ընելու ամենեին յօժարութիւն չունենալը, և դժկամակութիւնը կանցնի : Չարէն հաստատ զգուցելու, և բարիին հակամիտութիւն մը՝ և յօժարութիւն մը կը հաստատուի իր ներսը : Հիմա ան մարդը՝ նոր նպատակներ ու զիտաւորութիւններ ունի, և ամէն բանի մէջ իր զիտաւորութիւնը Եստուած փառաւորել է : Յիսուսը կ'ընտրէ իբրև իր Տէրը • ու աս իր ընտրութիւնը՝ վախով մը բրած չէ, ինչպէս որ մեռնելու վրայ եղող մեղաւոր մը՝ Քրիստոսի հաւատալ կ'ուզէ, միայն որ դժոխք չերթայ • թէ և մեղքը ճշմարտապէս չատէր, ու ո՛չ ալ անկէ ազատիլ կ'ուզէ : Գարձեալ՝ իրեն շաւիղ ըլլալու համար, սրբութեան ճանքան կ'ընտրէ : Եստուծոյ խոստմունքն ալ չէ թէ իրեն գերութեանը, այլ ժառանգութեանը՝ և յաւիտենական ժառանգութեանը համար կ'ընդունի : Չէ թէ միայն Քրիստոսի լուծը կը կրէ, այլ հաճութեամբ վրան կ'առնէ անիկա : Բնաւորիչ մէկ ժամանակ մը՝ կրօնական կրթութեան մէջ անցուցած ժամանակէն աւելի ուրախութեամբ չանցընէր :

Հիմա իմ բարեկամս՝ քանի որ առաջ երթաս, առ բանը քու խղճմտանքիդ հարցուր թէ՛ դուն ճիշտ աս կերպով նորոգուած ես արդեօք : Իրաւ որ երջանիկ մէկը պիտի ըլլաս, թէ որ քու վիճակդ ասանկ ըլլայ • բայց նայէ՛ որ դուն քեզ հաւատարմութեամբ քննես :

3 • Դարձի գալուն ատենը՝ յօժարոյն լիւննէրոյն ընթացիւ փոխոյնս կ'ըլլայ : Դարձի եկողին մեծ փափագը չէ թէ հարստութեան ետեւէ է՛ այլ շնորհաց : Ենիկա անօթի ու ծարաւ է անոր, աւելի կ'ընտրէ շնորհալի ըլլալ՝ քան թէ մեծ • աւելի կ'ուզէ աշխարհիս մէջ ամենէն սուրբ ըլլալ՝ քան թէ ամենէն դիւնական, ամենէն հոչակաւոր և ամենէն աւելի յաջողութեան մէջ : Ժամանակ մը թերեւս ասանկ ըսելու պատրաստ էր • «Ո՛հ թէ որ ես միայն մեծ յարգ ունենայի, հարստութիւն ունենայի, և հաճոյքներս կատարելու մէջ լողայի • թէ որ պարտքերս վճարուած ըլլային, ու ապրուստս հոգացուէր, երջանիկ պիտի ըլլայի» : Բայց հիմա իր լիզուն փոխուած է : «Ո՛հ կ'ըսէ ինքը • «Թէ որ միայն ճշմարիտ քրիստոնեայ մը ըլլայի, թէ և աղքատ ու անարդ՝ ինք իր անձս երջանիկ սեպէի պիտի» : Ընթերցող, արդեօք ան է քու սրտիդ խօսքն ալ : Դարձի եկած մարդը՝ կ'ուրախանայ Աստուծոյ վկայութիւններուն ճամբուն մէջ՝ ամէն տեսակ հարստութիւններէն աւելի : Տէրօջը օրէնքին մէջ կ'ուրախանայ, որուն համար քիչ մը առաջ ախորժակ չունէր : Քրիստոսի վրայ խորհրդածութիւն՝ ու անոր ժողովրդոյը

Տես ընկերութիւն ընկուն պէս ուրախութիւն մը չունի հիմա :

Իր հոգեբը փոխուած են : Առաջ՝ գլխաւորապէս աշխարհի վերաբերեալ էին • ոչ ալ հոգւոյն գործքերուն քիչիկ մը ժամանակ կու տար • բայց հիմա ինք կը կանչէ : « Ի՞նչ ընկու եմ որ փրկուիմ » : Իր երկն-դնեբը տարբեր են : Ատեն մը՝ աշխարհային բարիքները , կամ աշխարհին՝ ու իր բարեկամներուն սէրը կորսնցընելուն պէս ուրիշ վախ մը չունէր • ցաւ քաշելուն , աղքատութեան ու երեսէ իյնալուն պէս սոսկալի բան մը չկար իրեն : Բայց հիմա ասոնք իր աչքին՝ Աստուծոյ երեսէն իյնալուն , կամ անոր անհաճոյ ըլլալուն հետ չեն կրնար բաղդատուիլ : Արջահայեցութեամբ և զգուշաւոր կերպով կը քալէ որ մեղքը իրեն չհասնի : Աստուծոյ շնորհքը կորսնցընելուն վրայ խորհիլն անգամ , սիրտը ցաւով կը լեցընէ :

Աշխարհիս մէջ բնաւ մէկ խորհրդածութիւն մը այնքան ցաւ չտար իրեն , քան որչափ Քրիստոսէն զատուիլը :

Ընթերցող • արդեօք քու կամքդ որոշակի հաստատուած է առ Աստուած՝ Քրիստոսով , ու արդեօք քու փափաքներդ ան ըրած որոշմունքիդ համաձայն են : Մարդուն վրայ՝ դարձի գալուն եղած փոփոխութիւնը , բոլոր իր կարողութիւններէն վրայ ներգործութիւն ունի : Ենոնք՝ որ առաջ մեղքի գործիք էին , հիմա արդարութեան գործիք կ'ըլլան : Են՝ որ առաջ իր մարմինը կը պղծէր , հիմա իր անօթը սրբութեամբ և պատուով բա-

րեխառնութեան և զգաստութեան մէջ կը պահէ ր  
ու միայն Տէրոջը կը նուիրէ :

Դարձի գալը՝ մարդուն բոլոր կենացը և գործ-  
ութիւնն կ'ազդէ : Սոր ընթացք մը կը բռնէ : Իր  
կենցաղավարութիւնը երկինքն է : Արբոր Աստուած  
անոր նոր սիրտ մը տայ , ու իր օրէնքը անոր մտքին  
վրայ գրէ , անմիջապէս իր պատուիրանքներուն  
մէջ կը քալէ ու իր դատաստանները կը պահէ :  
Թէպէտ և մեղքը կրնայ ըլլալ որ իր մէջը բնակի ,  
բայց ալ անկէ ետեւ անոր վրայ իշխողութիւն չու-  
նի : Իր պատուը ունի սրբութիւնով , մէկ մեծ  
յարդ մը կ'զգայ Աստուծոյ բոլոր հրամաններուն  
վրայ , և խղճմտանքին կը հարցընէ՝ ան բաներուն  
վրայով՝ որն որ ոմանք չնչին մեղք մը , կամ սնտոխ  
պարտաւորութիւն մը կը սեպնն : Ալ հիմա իմ սի-  
րելի ընթերցողս՝ աղէկ քննէ քու սիրտդ ու  
կեանքդ , և քու խղճմտանքիդ նայէ՝ թէ արդեօք  
դարձի դալուն բնութեանը վրայ նկարագրածիս  
պէս է քու վիճակդ ու քու փորձառութիւնդ ալ ,  
թէ ոչ :

Որովհետեւ բնաւ յոյս չունիմ երկինքը քու ե-  
րեսդ տեսնելու՝ թէ որ աս աշխարհիս վրայ եղած  
ատենդ դարձի չգաս , (Տես Մատ . ԺԷ . 3 : ) և  
որովհետեւ մեծ վտանգ կայ որ բնական վիճակիդ  
մէջ մնալու դո՛հ պիտի կենաս ու Աստուծոյ ու-  
ղորմութիւնն ու շնորհքը ընդունիլ յուսաս՝ ա-  
ռանց բոլորովին փոխուելու և նորոգուելու իր շը-  
նորհքովն ու Հոգիովն , ուստի ձեռք կը զարնեմ  
հիմա ապացուցանելու :

բ. Գարջի գալու թայարչահատէս Հարկաւոր  
 ԸԼՈՒԸ :

1. Առանց ասոր քու էր-թիւնդ պարտաւ է .  
 վասն զի դուն ինչ վախճանի համար որ ստեղծ-  
 ուեր ես , անոր չես ծառայեր : Չէ՞ որ Աստուած  
 քեզ ստեղծեց՝ քու հոգիդ ու մարմինդ , բոլորո-  
 վին իրեն ծառայելու համար . բայց առանց դար-  
 ձի գալու՝ ոչինչ վախճանի համար ապրած կ'ըլլաս .  
 այո՛ , և մանաւանդ թէ շատ գէշ վախճանի մը  
 համար . բոլոր քու զօրութիւններդ ու կարողու-  
 թիւններդ այնչափ ապականած են ան անկումին  
 պատճառովը՝ որ մինչև որ մեռած գործքերէն չմաք-  
 րուիս , կենդանի Աստուծոյ ծառայութիւն չես կրնար  
 ընել : Չորբացած անձը կարելի չէ որ Աստուծոյ  
 գործքը գործէ . վասն զի բնաւ անոր խելքը չհաս-  
 նիր , և անոր հակամիտութիւն ալ չունի ամենեւին :  
 Առանց դարձի գալու , դուն շատ գէշ վախճանի  
 համար կ'ապրիս . չնորդուած սիրար «Պիղծ թըռ-  
 չուններու վանդակ մըն է» , ու ապականութիւնով  
 լեցուն «դերեղման մը» : Բոլոր քու անդամներդ ու  
 զօրութիւններդ անիրաւութեան գործիք են , ու  
 Սատանային ծառաները : Դուն՝ Աստուած ան-  
 պատիւ ընելու , և անոր դէմ՝ պատերազմելու հետ  
 կ'ըլլաս շարունակ : Ա՛հ՝ իր ձեռացը գործքին  
 չարաչար գործածութեանը :

2. Առանց դարձի գալու քու կրօնական պար-  
 տաւորութիւններդ ու կարտաբաժ արարողու-  
 թիւններդ , ամէնը միկէն բողոքողն ունայն էն .  
 վասն զի անոնք ո՛չ կրնան Աստուծոյ հաճոյ ըլլալ :

ոչ ալ քու հոգիդ փրկել :

3 . Բոլոր +ո- յոյսերդ ունայն էն : Քու յոյսերդ հոս մէկ հաստատուն միթարութենէ մը զուրկ են . վասն զի ա՛լ աղէկ կ'ըլլայ հանդատութիւն : յուսալ բոլոր քու ոսկորներդ իրենց խաղերէն ելած ատենը , քան թէ ճշմարիտ երջանկութիւն՝ քանի որ քու մեղացդ մէջն ես : Եւ այսուհետեւ փրկութեան յոյս ունենալը ալ ունայն է : Թերեւս դուն ըսել ուզես թէ , « Իմ յոյսս Քրիստոսի վրայ է . ես բոլոր իմ վստահութիւնս Աստուծոյ վրայ կը դնեմ , և ուստի փրկուելու երկբայութիւն չեմ ըներ » : Բայց առանց վերստին ծննդեան երկիկնքը երթալ յուսալը , Քրիստոս սուտ վարդապետի մը տեղ դնելու պէս է : (Յովհ . 7 . 3 : ) Դաւիթին բողոքը աս էր . « Քու խօսքիդ կը յուսամ » . բայց քու յոյսդ իր խօսքին հակառակ է : Դուն չես կրնար ցոյց տալ ինձի Քրիստոսի մէկ խօսքը՝ որ երկիկնք երթալու յոյս մը տայ քեզի , քանի որ քու չարութիւններուդ մէջ կը շարունակես : Աստուած զգուելով կը մերժէ ասանկ յոյսերը : (Եսայ . խը . 1 , 2 : ) Դուն պիտի հարցնես հիմա . « Առաջին արդեօք որ ես յուսահատիմ » : Այո՛ . պէտք է որ չնորոգուած վիճակիդ մէջ երկիկնքը երթալու ամէն յոյսերը բոլորովին մէկ դի ձգես : Առանց սուրբ ըլլալու ոչ երբէք երջանկութեան պէտք է որ յուսաս : Բայց պէտք է որ ամենեւին յուսահատիս ողորմութիւն գտնելուդ վրայ , թէ որ զո՞րքս ու Աստուծոյ դառնաս , ոչ ալ զո՞րքս և դարձի գալուդ վրայ յուսահատ

տեղը ես , թէ որ Աստուծոյ սահմանած միջոցները ՚ի գործ դնես :

4 . Առանց դարձի գալու՝ Բողոք Քրիստոսի ըրածները շեղէ համար ունայն պիտի ըլլայ : (Յովհ . ԺԳ . 8 : Տե՛ր . ք . 14 :) Քու փրկութեանդ համար օգուտ մը պիտի չընէ : Ա իրատին ճննդեան ատենը առանց Հոգւոյն գործակցութեանը՝ Քրիստոսի փրկագործութեան արդիւնքէն օգուտ մը չես կրնար քաղել : Եւ ընդհակառակն կրնալ կարծիք իր խորհուրդներուն դէմ կ'նլէ , որով կարգադրուած է թէ՛ սրբացուցուելով մարդիկ փրկութիւն միայն կրնան ստանալ : Քրիստոս մէկը չպիտի իր Հօրը կամացը հակառակ ճամբով մը փրկէ , և աս է Աստուծոյ կամքը որ մենք սրբանանք : (Կ թԻ . ս . ԺԳ . 3 :) :

5 . Քու մեղացդ մէջ եղած ըլլալով փրկելը՝ Աստուծոյ սպորոգելեացը հակասակ պիտի գար : (1) Իր արդարութեանը . վասն զի Աստուծոյ արգարութեանը դատաստանը կը կայանայ ամէն մէկուն իր գործոցը համեմատ հատուցում ընելէն : Բայց թէ որ մարդիկ մարմնոյն ցանկու ըլլան , և տակաւին յաւիտենական կեանք քաղելու ըլլան , Աստուծոյ արգարութեան փառքը ուր պիտի ըլլայ . որովհետեւ մեղաւորին՝ արգարին գործոցը համեմատ տուածի պէս պիտի ըլլար : (2) Իր սրբութեանը : Թէ որ Աստուած չէ թէ միայն մեղաւորները փրկէր , այլ անոնք իրենց մեղացը մէջ մնալով փրկէր , իր սրբութիւնը պիտի աւրուէր : Իր բնութեանը անսահման սրբութեանը անիրաւութիւն եղած կ'ըլ-

լար, ասանկը իրեն հետ բնակեցընելը: Թէ որ  
 Դաւիթ չէր դիմանար իր տանը մէջ կամ իր ա-  
 ջացը առջև տեսնելու, (Սաղ. ճԹ. 3 — 7,) կրնան  
 մինչև անգամ մտքէդ անցընել որ Եստուած  
 ասանկը իր ներկայութեանը ընդունի: (3) Իր հըլ-  
 հարստութեանը վասն զի Եստուած երկինքէն յայտ-  
 նեց՝ որ եթէ մէկը ըսէ, «Թէ և իմ սրտիս յա-  
 մառութեանը մէջ քայլեմ, ինձի խաղաղութիւն  
 կ'ըլլայ, Տէրը պիտի չհաճի անոր խնայելու, հա-  
 պա ան ատենը Տէրոջը բարկութիւնը ու նախանձը  
 ան մարդուն վրայ պիտի բորբոքի, և աս գիրքիս  
 մէջը գրուած ամէն անէճքը անոր վրայ պիտի իջ-  
 նէ, ու Տէրը անոր անունը երկինքին տակէն բնա-  
 ջինջ պիտի ընէ: (Ի Օրի. իԹ. 19, 20:) Մե  
 Եստուած կը յայտնէ ալ թէ, ան՝ որ «Իր լեռը  
 ելէ սուրբ ձեռք և մաքուր սիրտ ունենալու է»: (Սաղ. իԴ. 3, 4:) Ուստի ի՞նչպէս Եստուած  
 ճշմարիտ կրնայ ըլլալ թէ որ աս ամէն ըսածնե-  
 րուն չնայելով, առանց դարձի գալու՝ մարդիկը  
 երկինք առնելու ըլլայ: (4) Իր Իմաստութեանը  
 վասն զի ասիկա՝ իր ամենէն մեծ ողորմութիւննե-  
 րը, անոնց յարգը չգիտցողներուն տալ կ'ըլլայ:  
 Չսրբացած մեղաւորը՝ Եստուծոյ մեծ Փրկութեանը  
 վրայ շատ քիչ արժէք կը դնէ: Եւ Եստուծոյ  
 անսահման իմաստութեանը ամենեւին համաձայն  
 չգար, անանկները հոգևոր շնորհքը ընդունելու  
 ստիպել՝ որոնք որ չափազանց շնորհակալ չեն ըլ-  
 ար: Մե իր իմաստութեանը վրայ նախատինք  
 մը բերել կ'ըլլայ, ըստ որում մեղաւորները ի՞



72/4-8  
 շնորհքը ընդունելու պատրաստութիւն չունին :  
 Աստուծոյ իմաստութիւնը կ'երեւայ ամէն բաները  
 մէկմէկու հետ յարմարցնելուն կողմանէ . միջոցները՝  
 նպատակներուն , ու շնորհքին որպիսութիւնը՝  
 առնողին ընդունակութեանը յարմար ըլլալով :  
 Հիմա թէ որ դարձի չեկած անձ մը երկինքը տանէր ,  
 ճիշտ իրաց բնութեանը նայելով՝ կարելի չէր ա-  
 նոր և ոչ քիչիկ մը անգամ հոն երջանիկ ըլլալը :  
 Թէ որ երկնային աշխարհին զբօսանքները , մե-  
 զաւորներուն աս տեղ զուարճութիւն զգացած բա-  
 ներէն բաղկանայ . թէ որ ան տեղի վայելքը , աշ-  
 խարհային հարստութիւններ՝ հաճոյքներ ու պա-  
 տիւններ ըլլային . թէ որ ան տեղի պարապմունքը ,  
 աս ներկայ կենաց զբօսանքներն ըլլային՝ ան ատենը  
 մէկ կերպ մը զուարճութիւն կրնային ունենալ հոն .  
 թէպէտ և ասանկով ալ ճշմարիտ հաստատուն եր-  
 ջանկութիւն չէին կրնար ունենալ . բայց աս բա-  
 ները երկինքը ամենեւին տեղ չունին : Են վիճակին  
 երջանկութիւնը՝ Աստուծոյ ստորոգելացը և ա-  
 նոնց արարչագործութեան , նախախնամութեան և  
 մասնաւորապէս փրկագործութեան մէջ յայտնու-  
 թեանը վրայով խորհրդածելուն վրայ կը կայանայ :  
 Ուստի «Տէրը տեսնալ» կ'ըսուի՝ իբրև վիճակ դի-  
 տութեան և ընդունելի ըլլալու Աստուծոյ , և մըշ-  
 արնջինաբար անոր ծառայելու և զինքը փառարա-  
 նելու : Ասոր համար է որ փառարանութիւնը՝ իբ-  
 րև երկնային զօրաց պարապմունք կը կոչուի ընդ-  
 հանրապէս : Գալու աշխարհին մէջի զբաղումները  
 ասոնք են . և ասոնց մէջ գերագոյն երջանկութիւն

չգտնողները, երկինքն ալ չեն կրնար դռնալ : Բայց  
 աս բաները՝ անսուրբ մարդու մը ճշմարիտ մէկ գո-  
 հունակութիւն մը չեն կրնար ընծայել. սուրբ Աստ-  
 ուած մը՝ սարսափելու առարկայ մը պիտի ըլլայ,  
 իրենց ուրախութիւն տալու տեղը. ու անոր ծա-  
 ռայելը ձանձրութիւն, ինչպէս որ հիմա ալ անանկ  
 կ'ըլլայ : Թէ որ հիմա քու կենցաղավարութիւնդ  
 երկրի վրայ է, ու չէ թէ երկինքին մէջ. թէ որ  
 հիմա զգայարանաց հաճոյքներովը կ'ապրիս. թէ  
 որ հիմա յիմար ու փնասակար ցանկութիւններու  
 կը ծառայես, քու մարմինդ ու հոգիդ սուրբ և  
 Աստուծոյ ընդունելի կենդանի պատարագ մը նուի-  
 րելու տեղը. թէ որ հիմա ժամանակի ունայնու-  
 թիւններուն մէջ երջանկութիւն կը փնտռես. թէ  
 որ հիմա Աստուծոյ ժողովուրդէն կը զզուիս և ա-  
 նոնց ընկերութենէն կը փախչիս. թէ որ հիմա աշ-  
 խարհային և զգայական կիրքեր կը տիրեն վրագ,  
 ճշմարիտ քրիստոնեայի մը մաքուր՝ սուրբ և երկ-  
 նային բնաւորութիւն մը ունենալու տեղը, ստոյգ  
 գիտնաս որ Աստուծոյ օրհնեալ ներկայութեանը  
 ընդունուելիք չունիս. դուն անոր մօտենալու բա-  
 ցարձակապէս անընդունակ ես. ճշարիտ քրիստոն-  
 եաներուն երջանկութեանը վրայ դադարաւ մը  
 չես կրնար ունենալ. դուն՝ կոյրի մը տեսութեան  
 գեղեցկութեանը, կամ խուլի մը ներդաշնակութեան  
 զուարճութիւններէն զգացածէն աւելի չես կրնար  
 զգալ : (5) Անդարձ մեղաւորներուն երկինք ըն-  
 դունուելը՝ Աստուծոյ ամենագիտութեանը, ամ-  
 թեանկարողութեանը, անփոփոխելիութեանը դէմ

պիտի ըլլար : Երկնային վճիռը աս է որ «Սրտով  
մաքուր եղողները Եստուած պիտի տեսնեն» :  
(Մատթ . Է . 8 :) Հիմա՛ թէ որ Քրիստոս ան-  
դարձները երկինք տանելու ըլլար , առանց Ես-  
տուծոյ գիտութեանը ընելու էր . ո՞ւր պիտի մնար  
ուրեմն՝ անոր ամենագիտութիւնը . թէ որ անոր  
կամքին դէմ ըլլար , ո՞ւր պիտի մնար ուրեմն՝ իր  
ամենակարողութիւնը . կամ թէ անիկա իր կամքը  
փոխելու էր , և ան ատենը ո՞ւր պիտի մնար իր  
անփոփոխելի ըլլալը : Ա՛հ ինչպէս ունայն և յի-  
մարական , ինչպէս անպատշաճ և արտառոց , ինչ-  
պէս չար և հայհոյական է ուրեմն քու երկինք եր-  
թալու յոյսդ՝ առանց աս աշխարհիս մէջ վերրու-  
տին ծնանելու և դարձի դալու :

6 . Քրիստոսի քեզ փրկելը քու մեղքերուդ  
մէջ՝ իր Խօսքին դէմ պիտի ըլլայ : Ե՛ն՝ որ ինքը  
բուն ճշմարտութիւն է , ըսաւ . «Թէ որ դարձի  
չդար , երկնից թաղաւորութիւնը բնաւ պիտի չը-  
մանէք» : (Մատթ . ԺԷ . 3 :) Եւ դարձեալ՝ «Թէ  
որ չապաշխարէք , պիտի կորսուիք» : (Ղ . Կ . ԺԷ .  
3 :) Սէկը պիտի խորհի որ՝ Քրիստոսի մէ՛կ խօսքը  
բաւական ըլլալու է . բայց քանի քանի հեղ , և որ-  
չափ ստիպմամբ կը կրկնէ . «Ճշմարիտ ճշմարիտ  
կ'ըսեմ ձեզի , թէ որ մէկ մարդ մը նորէն չծնանի ,  
չկրնար Եստուծոյ թաղաւորութիւնը մտնել :  
Դուն մի՛ զարմանար որ քեզի ըսի , Պէտք է ձեզի  
նորէն ծնանիլ : (Յովհ . Դ . 3 , 5 , 7 :) Եւ  
դուն տակաւին քու ունայն յոյսդ ու յանդուգն  
վստահութիւնդ ամուր կը բռնեն , ուղղակի Քր-

ըհատուի բուն իր խօսքին դէմ :

Բայց չէ թէ միայն իր թաղաւորութեանը օրէնքին բոլորովին դէմ պիտի երթայ՝ քու աս վեճակիդ մէջը թէ որ քեզ փրկելու ըլլայ, այլ նաև իր Երդոմին դէմ : Ինքը երդում բրաւ որ՝ տղիտութեան, անհաւատութեան, անապաշխարութեան, ու անհնազանդութեան մէջ շարունակողները, իր հանգիստը չպիտի մոնեն : (Յբք. 18 :) Ընորհաց ուխտը երդումով մը հաստատուած է, ու արիւնով կնքուած : (Յբք. 17 : Մատ. իղ. 28 :) Բայց ամէնը պարապ եղած ըլլալու է, թէ որ դուն չսրբացած ապրելով ու մեռնելով՝ փրկուիս :

Ետուած արդարև պիտի ցուցնէ թէ ինչ Տեղքը կ'ապէ, ան նոյն աստեղը՝ որ ապաշխարած Տեղքորին իր ողորմութիւնը կը ցոյցնէ : Ուստի ան որ Տէրոջը անունը ճշմարտապէս կ'անուանէ, անիրաւութենէ մէկ դի կը կենայ և բոլոր ամբարշտութիւնը կ'ուրանայ. և ան՝ որ Քրիստոսի միջոցով կեանք ունենալ կը յուսայ, ինքզինքը կը մաքրէ՝ ինչպէս որ անիկա մաքուր է. ապա թէ ոչ Քրիստոս մեղքը սիրող կարծուած պիտի ըլլայ : Բայց ամէն մարդու պիտի գիտցնէ որ ինքը թէ և մեղքի թողութիւն կու տայ, բայց բնաւ զանիկա չքաջալիբէր :

Բայց նաև փրկութեան փութոտութեանը մէջ Քրիստոսի ունեցած բոլոր պարտօններուն դէմ՝ կ'ըլլայ : Ետուած անիկա Իշխան և Փրկիչ ըլլալու բարձրացուց՝ ապաշխարութիւն և մեղա

Թողութիւն տալու . և երկուքին ալ դէմ գործած պիտի ըլլար՝ թէ որ մարդիկ իրենց մեղաց մէջը փրկելու ըլլար : Իշխանի մը կամ թագաւորի մը պաշտօնն է՝ չարութիւն ընողներուն վախ տալ , և աղէկութիւն ընողներուն գովութիւն : Ինքը Աստուծոյ սպասաւորն է , վրէժխնդիր՝ բարկութիւն հասցընելու չար գործողին վրայ : Լիմա թէ որ Քրիստոս՝ ամբարշտութեան մէջ շարունակողին պաշտպան ըլլար , ու անոնք իրեն հետ Լուսնորեւ տար , որոնք՝ որ չէին ուզեր իրենց վրայ անոր Լուսնորեւը , ասիկա բողբոջին իրեն պաշտօնին դէմ պիտի ըլլար : Ա՞ր թագաւորը իր արքունիքը պիտի առնէր բացէ՛ ՚ի բաց թշնամի եղող ապստամբները : Եւ որովհետև Քրիստոս Իշխան պիտի չըլլար , անանկ ալ Փրկիչ չպիտի ըլլար՝ թէ որ աս բանը ընելու ըլլար . վասն զի իր փրկութիւնը աստուածային է . ինքը կ'ըսուի «Յիսուս . քանզի անիկա իր ժողովուրդը իրենց մեղքերէն պիտի փրկէ» . անանկ որ՝ եթէ անոնք իրենց մեղացը մէջ փրկելու ըլլար , ո՛չ թագաւոր՝ ո՛չ ալ Փրկիչ կ'ըլլար :

Ա՛հ՝ քեզի ի՞նչ եղաւ՝ ո՛վ խորունկ քնացող . ելե՛ր քու Աստուծոյդ աղաղակէ՛ , որ չկորսուիս : Արթնցիր ո՛վ անհոգ մեղաւոր , չըլլայ որ քու շարութիւններուդ մէջ կորսուիս : Բորոտներուն պէս ըսէ . «Թէ որ հոս մնանք , պիտի մեռնինք» : (ՊԹԹԹ . է . 4 :) Իրաւ որ դժոխքէն դուրս ըլլալը , քիչ առնէն հոն ըլլալէդ աւելի ստոյգ չէ՛ թէ որ չապաշխարիս ու դարձի չգաս : Ա՛մ դառնալու

ես, և կամ պիտի կորսուիս : Ի՞նչպէս դուն քու  
 ուղիւրդ կորստեանդ պատճառ պիտի ըլլաս, թէ որ  
 տակաւին կարծրացընես ինքզինքդ քու մեղաւոր  
 վիճակիդ մէջ մնալու : Թէ որ բանական մարդ ես՝  
 ու չէ թէ անբան արարած մը, կանկառ՝ ու մտածէ  
 թէ ո՞ւր կ'երթաս : Թէ որ դուն մարդկային բա-  
 նականութիւն ու իմացականութիւնը ունիս՝ բաց  
 աչքով դժոխքին բոցերուն մէջ վազելու մի՛ հա-  
 մարձակիր • մտմտա՛ դուն քեզի և Տէրօղմէն խնդ-  
 րէ դարձի դալդ : Ի՞նչ ըսել է • մարդ ըլլայ մե-  
 կը, և իր կամօքը դժոխքը երթայ • որ ընդհակա-  
 ռակն՝ անբաներն անգամ վտանգի մը մէջ բռնի կը  
 ձգուին : Ի՞նչ զարմանալի բան է որ բանականու-  
 թեամբ զարդարուած մեկը՝ մահուան, դժոխքին  
 և Եմենակարողին վրէժխնդրութեանը հետ խա-  
 դայ : Յաւիտենական տանջանքէն փախչելու չե՞ս  
 արտօրար : Թո՛ղ բանականութիւնդ քեզ յաղթե-  
 աս մասին : Բանաւոր բան մըն է արդեօք՝ անաս-  
 ման մեծութիւն ունեցող Եստուծոյ հետ հակա-  
 ռակիլ, անոր խօսքին դէմ ինքզինքդ կարծրացը-  
 նել : Բանաւոր բան մըն է արդեօք՝ որ կաւէ շին-  
 ուած ամաններու կտորուանքները իրենց Շինողին  
 դէմ դնեն : Ընթերցող • հանգարտ պիտի նստիս  
 տեղդ՝ մինչև որ Եստուծոյ բարկութեան հոսան-  
 քը վրադ գայ, ու քեզ յաւիտենական Ավիհանո-  
 սին թշուառութեանը մէջ ընկղմէ : Արդեօք  
 քեզի աղէկ կ'ըլլայ որ փորձես թէ՛ Եստուած իր  
 տուած խօսքին պէս կ'ընէ՞, ու սիրտդ խստացընես  
 ունայն մտացածին կեղծիքով թէ՛ ամէն բան աղէկ

պիտի ըլլայ քեզի, քանի որ տակաւին չսրբացած  
 կը մնաս : Ո՛հ խեղացնոր մեղաւորներ, ի՞նչ պի-  
 տի ընեն այցելութեան օրը, ու օգնութեան հա-  
 մար որո՞ւ պիտի դիմեն : (Եսայ . Ժ . 3 : ) Ի՞նչ  
 զօրաւոր կերպով մեղքը անոնց միտքը յաիշտա-  
 կեց : Ինտո՞ր աս աշխարհիս աստուածը անոնց աչ-  
 ուրները տիրապէս կուրացուց : Ի՞նչ հզօր մոլորու-  
 թիւն է : Ի՞նչպէս կարծր է իրենց սրտերը : Եր-  
 բեմն կը մտածեմ որ՝ Եստուծոյ ողորմութիւնը  
 պիտի կահուղցնէ, ու իր հրապուրիչ հրաւերը  
 անոնց յաղթէ, բայց անոնք իրենց եղածին պէս  
 կը մնան, երբեմն ալ կը մտածեմ որ՝ Եստուծոյ  
 սպառնալիքը անոնք պիտի համոզէ, բայց ո՛չ ալ  
 ասոնք բան մը կը կատարեն : Ո՛վ Տէր Եստուած,  
 վերէն քու օգնութիւնդ խրկէ : Քու ողորմու-  
 թեանդ ու քու սիրելի Արդւոյդ համար՝ դժա՛ ա-  
 սիկա կարդացողներուն հոգւոյն, ու զիրենք յաւի-  
 տենական կրակէն փրկէ :

Արպէս զի չըլլայ որ ամենալտանգաւոր և կոր-  
 ծանիչ սխալմունք մը ընես երեւակայելով թէ դար-  
 ձի եկած ես քանի որ դեռ չես եկած՝ հիմա քու  
 առջևդ դնեմ պիտի :

՞ . Իսրայիլի զէկածներու նշանները : Պօղոս  
 առաքեալը մեղաւորներու սոսկալի ցուցակ մը կու-  
 տայ մեզի, որն որ կ'աղաչեմ քեզի՝ բոլոր ուշադ-  
 րութեամբ մտիկ ընես : «Սիկա իմանալով դիտ-  
 նաս, որ ամէն պոռնիկ՝ կամ պիղծ՝ կամ ազահ  
 որ կռապաշտ է, Քրիստոսի ու Եստուծոյ թա-  
 գաւորութեանը մէջ ժառանգութիւն չունի :»

Չըլայ որ մէկը ձեզ խաբէ փուճ խօսքերով՝  
ինչու որ աս բաներուն համար Եստուծոյ բարկու-  
թիւնը կու գայ անհնազանդութեան որդւոցը վը-  
րայ" : (Սփե" . Ե . 5 , 6 : ) « Չէք գիտեր որ անի-  
րաւները՝ Եստուծոյ արքայութիւնը պիտի չժա-  
ռանգեն . մի՛ խաբուիք , ո՛չ պոռնիկները՝ ո՛չ  
կռապաշտները՝ ո՛չ շնացողները՝ ո՛չ իգացեալները՝  
ո՛չ արուագէտները՝ ո՛չ դողերը՝ ո՛չ ազահները՝  
ո՛չ զինովները՝ ո՛չ նախատողները ու ո՛չ յափըշ-  
տակողները՝ Եստուծոյ թագաւորութիւնը պիտի  
չժառանգեն : ( Թ Կորն . Գ . 9 , 10 : ) « Ի՛նչ  
վախկոտներուն՝ ու անհաւատներուն՝ և պիղծե-  
րուն՝ ու մարգասպաններուն՝ ու պոռնիկներուն՝ և  
կախարդներուն՝ ու կռապաշտներուն՝ և բոլոր  
ստախօսներուն բաժինը՝ կրակով ու ծծումբով  
վառած լիճին մէջը պիտի ըլլայ , որ է երկրորդ  
մահը" : ( Յայտ . Իմ . 8 : )

Կան ուրիշ դարձի չեկած անսուրբ անձինք  
ալ՝ որ իբր թէ ասանկ յայտնի կերպով ճա-  
կատնուն վրայ չեն կրիք իրենց նշանները , այլ  
գաղտնի իրենց ձեռքին մէջն է : Եստուծոյ շատ ան-  
գամ կը խաբեն ինքզինքնին ալ՝ ուրիշներն ալ ,  
ու քրիստոնէի և աղէկ մարդու տեղ կանցնին՝  
քանի որ դեռ սրտերնին չար է : Աւ շատերն ալ՝  
առանց երևան ելլելու կ'անցնին , մինչև որ մահն  
ու դատաստանը ամէն բան երևան հանէ : Միտք  
բեր իմ բարեկամս . շատերը կը կորսուին անանկ  
մէկ մեղքով մը՝ որ չէ միայն ուրիշներէն ծածկուած  
է , այլ մինչև անգամ իրենցմէ ալ՝ իրենց սրտեր-  
նին չքննելուն համար :



Հետեւեալները՝ ան պետակ ծածուկ Ռդէրէն  
 Բի Կանինէրն էն , որոնցմով հարդիկ կորոսար  
 կ'երթան :

1 . Տգիտութիւնը աս մեղքերէն մէկն է : Ո՛հ  
 քանի քանիները կը մեռցընէ աս մեղքը խաւարի  
 մէջ՝ քանի որ իրենք կը խորհին թէ աղէկ սիրտ  
 ունին , ու երկնից ճամբուն մէջն են : Ինչ պատ-  
 ճառանք ալ որ ընես քու տգիտութեանդ համար ,  
 աս աղէկ գիտցիր որ հողեկորոյս չարիք մըն է :  
 Ղշմարտութեան Եստուածը կ'ըսէ որ , ոմանք՝ որ իր  
 ժողովուրդն են կ'ըսէին , « Գիտութիւն չունենալ-  
 նուն համար բնաջինջ եղան » : ( Ով . 7 . 6 : )  
 « Բանգի անիկա իմաստուն ժողովուրդ չէ . ուստի  
 զանիկա ստեղծողը՝ անոր վրայ պիտի չգլխայ , ու  
 զանիկա կազմողը անոր պիտի չողորմի » : ( Եսայ .  
 17 . 11 : ) Օգնչ եղեր որ չըլլայ թէ քու վե-  
 ճակդ ալ ասանկ ըլլայ . ու ալ այսուհետեւ քու  
 տգիտութեանդ համար պատճառանքներ մի՛ ըներ :

2 . Սերբը Բրիտանիոսի Կալոն կողմէ գողտի  
 կերպով ետ պահել : Ոմանք շատ բաներ կ'ընեն ,  
 բայց բոլորովին անոր չեն տար ինքզինքնին : Հա-  
 ճոյական մեղք մը ունենալու են . գաղտնի բացա-  
 ութութիւններ ալ ունին՝ կենաց , կամ ազատու-  
 թեան , կամ ստացուածքի կողմանէ :

3 . Ծիսահանդութիւն . կամ կրօնի մարտ-  
 քին բաները մայն կոտորելով բաւականաւ :  
 Հատերը կրօնքին դուրսի դիուն վրայ կ'ապաւի-  
 նին , և իրենց պարտաւորութիւններուն դրսուանց  
 կատարմանը , և աս բանը շատ անգամ սաստիկ կը

խաբէ և յայտնի մեղքէն աւելի ստոյգ կերպով կը կորսնցընէ զիրենք . ինչպէս որ Փարիսեցւոց եղաւ : Ենոնք ճշմարտութիւնը կը լսեն , ծով կը պահեն , աղօթք կ'ընեն , ողորմութիւն կու տան . ու անոր համար կը հաւատան թէ իրենց վիճակը աղէկ է : (Ղ<sup>ո</sup> . ԺԷ . 11 , 12 : ) Որ ընդ հակառակն՝ աս արտաքին բաներուն մէջ մնալով , ու կրօնքին զօրութիւնը իրենց վրայ չազդելով , երկնից ճամբուն մէջնըլլալու իրենց անձնախաբ յոյսերնին՝ ու հաստատ համոզումնին , իրենց մահուանէն ետեւ պիտի դերեւելէ : (Մ<sup>ա</sup> . Է . 22 , 23 : ) Ահ սոսկալի վիճակ . երբոր մարդու մը կրօնքը զինքը կարծրացնելու ծառայէ , և իրօք իր հոգին խաբելու :

4 . Ենչնախան արդարո՞ւրիւն : Երբոր մարդիկ իրենց անձին արդարութեանը վրայ վստահ կ'ըլլան , ասով Յիսուս իրենց Փրկիչն ըլլալը կը մերժեն : Ա՛վ իմ սիրելի բարեկամս , աս բանին վրայ շատ արթուն ըլլալու կարօտ ես . վասն զի չէ թէ միայն քու մեղքդ , բայց քու պարտաւորութիւններդ կատարելու վրայ ապաւինելդ ալ քեզ կրօնայ կործանել . որովհետեւ քու անձնական արդարութիւնովդ՝ Եստուծոյ անսահման արդարութիւնը հաճեցընել , ու անանկով թողութիւն առնել երեւակայելդ , Քրիստոս իր պաշտօնէն հանել և քու պարտաւորութիւնդ կատարելդ , ու ըրած գործքերդ , Փրկիչ մը ընել է :

5 . Ելխարհասիրո՞ւրիւն արիւրե՛լ՝ ստոյգ ապացոյց մըն է դարձի չեկած սիրտի մը : (Մ<sup>ա</sup>րկ . Ժ . 22 : Յովհ . ք . 14 — 16 : ) Ես մեղքը շատ ան-

գամ Քրիստոնէական յօժարամիտ դաւանութեանը գեղեցիկ երևոյթին տակ պահուրտած կ'ըլլայ : Ենանկ մէկ խաբելու զօրութիւն մը կայ անոր մէջ՝ որ շատ անգամ թէ և որչափ ալ որ ուրիշները կրնան տեսնել՝ ան տեսակ մարդուն աշխարհասէր ըլլալը , ինքը անիկա չտեսներ . բայց այնքան պատճառանքներ ու պատրուակներ ունի աշխարհին ետեւէն երթալուն համար՝ որ իր աչուրները կը կուրցընէ ու ինք իր անձը խաբելով կը կորսուի :

6 . Ուսակալութիւն որեւէն ալ անոնց դէմ՝ որ կը կարծողին թէ իրենց վիսա ըրած են : Կրօնասէր մարդիկներ սեպուել ուղղորդներէն շատերը իրենց սրտին մէջ ոխ կը պահեն , ու չարին տեղը չար կը հատուցանեն , ուղղակի Եւետարանին կանոնին՝ Քրիստոսի օրինակին՝ ու Եստուծոյ բնութեանը դէմ : Ես տեսակ մարդիկը մաղձի դաւանութեան ու թշուառութեան վիճակի մէջ են :

Ո՛վ ընթերցող , ասոնցմէ բան մը քեզի չհրպաքիր : Ո՛հ , քննէ , ու քննէ՛ նորէն՝ ու քու սրտիդ հետ դատաստանի մտիր սաստիկ կերպով : Եստուծո՛մէ վա՛յ կայ քեզի՝ թէ որ կամաւոր ազիտութեան մէջ գտնուիս , արտաքին կրօնական բաներուն գոհ ըլլաս , քու անձիդ վրայ վստահ ըլլաս՝ աշխարհասիրութեան մէջ ընկղմած , կամ չարութեամբ թունաւորուած . թէ որ ասոնցմէ մէկը քու վիճակդ ըլլայ , ստոյգ է որ դարձի եկած չես դուն :

7 . Երբարդատանութիւն : Թէ որ մարդոց գովելը Եստուծոյ գովեստէն աւելի կը սիրես , ստոյգ է որ տակաւին քու մեղացդ մէջն ես : Թէ

որ բնաւ չտեսար ու չողբացիր քու սրտիդ ամբար-  
տաւանութեանը վրայ՝ Եստուծոյ դարձած ըլլալու  
տեղը : անոր դէմ ապստամբ ես : Ես մեղքը  
շատերուն սրտին մէջ կը տիրէ՝ որ իրենք չեն գի-  
տեր . ու իրենք իրենց անձին ամենեւին տեղեակ  
չեն : (Յովհ . Թ . 40 :) )

8 . Հեշտութեան խեղճութիւնը : (Թ՛ Տե՛Տ . 4 . 4 :)  
Հեշտութեան ետեւէ եղողը՝ Եստուծոյ մեռած է  
կենդանոյն : Եսիկա ուրեմն շատ մէկ գէշ նշան  
մըն է : Թէ որ մարմինին իր ազատութիւնը տաս ,  
թէ որ փայփայես և ուզածն ընես՝ փոխանակ ու-  
րանալու և սանձելու , թէ որ քու զուարճու-  
թիւնդ՝ զգայարանացդ ուզածը կատարեն է , կրօն-  
քին որ կերպարանքը որ կ'ուզես ունեցիր՝ Տէր  
Յիսուսին չես ծառայեր , այլ ստուգիւ դարձի չե-  
կած մէկն ես : (Հովհ . ԺԳ . 18 : Ը . 8 :) Ե-  
նոնք որ Քրիստոսինն են՝ իրենց մարմինը խաչը կը  
հանեն , և հող կը տանին որ յաղթեն անոր ,  
զսպեն անիկա , իբրև իրենց թշնամին : (Գաղ .  
Է . 24 :) )

Մարմնաւոր ապահովութիւնը , կամ ենթադա-  
տութեամբ՝ արդէն ինքզինքը ապահով վիճակի մէջ  
ըլլալ յուսալը , շատ վտանգաւոր է : Հատերը  
կ'ըսեն թէ խաղաղութիւն և ապահովութիւն է ,  
նոյն ատենը որ կորուստը յանկարծ անոնց վրայ կը  
հասնի : Հատերը կ'ուզեն , և մինչև անգամ հաս-  
տատ միտքերնին կը դնեն ինքնիրեննին յուսալու ,  
շատ թեթև հիմ մըն ալ ունենալով՝ թէ իրենց վի-  
ճակը աղէկ է , ու անոր համար ալ փոփոխութիւն

մը չեն փնտռեր՝ ու ասանկով իրենց մեղացը մէջ կը կորսուին : Խաղաղութեան մէջ էս : Ի՞նչ հիման վրայ հաստատած էս ատիկա : Սուրբ Գրոց խաղաղութի՞ւնն է արդեօք : Քու հոգւոյդ , բնաւորութեանդ , խօսակցութեանդ , և կենցաղավարութեանդ մէջ ճշմարիտ հաւատացեալ մը ըլլալու որոշիչ նշանները կա՞ն : Թի՛ որ չէ , ուրիշ որ և իցէ խռովութենէն աւելի՝ աս խաղաղութենէն վախցիր . և գիտցիր որ մարմնաւոր խաղաղութիւնը՝ ընդհանրապէս ամենէն աւելի հոգին մեռցնող թշնամին կ'ըլլայ :

Եւ հիմա՛ խղճմտանք , քու պաշտօնդ կատարէ : Ես գրուածները լսողներուն՝ կամ կարգացողներուն՝ թէ՛ դուրսը , և թէ՛ տան մէջ , խօսէ : Թի՛ որ դուն աս նշաններէն անոր վրայ գտնես , շատ պիղծ ըլլալը՝ իրեն ըսելու էս : Բերանդ սուտ մի՛ առներ , խաղաղութիւն է մի՛ ըսեր անոր՝ որուն որ Եստուած խաղաղութիւն է չըսէր : Թի՛ող բնաւ մէկ ցանկութիւն մը քեզ չը հաճեցնէ . ո՛չ անձնասիրութիւնը՝ ոչ ալ մարմնաւոր նախապաշարումը քեզ կուրցնէ : Դարձի եկած է՞ անանկը , թէ չէ : Երդեօք ինք իր անձին՝ որ և իցէ կերպով մեղքի թոյլտուութիւն կ'ընէ՞ , թէ չէ : Եմէն բանէն աւելի՝ արդեօք ճշմարտապէս կը սիրէ՞ զԵստուած , կը յարգէ՞ զանիկա , և կը հաճի՞ անոր , ու կ'զուարճանայ՞ անով , թէ չէ : Բողբովին մեղքին ինչ ըլլալուն վրայ սրտանց համոզուե՞ր է . բոլոր ինք իր անձին վրայ ունեցած ապաւինութիւնը մէկ դի ձգե՞ր է , ու ինք

իր անձը մեղքէն հանելով՝ բոլորովին Տէր Յիսուս Քրիստոսի տուենը է ինքզինքը : Կամ թէ՛ մինչեւ աս օրս տգիտութեան իշխանութեանը տակը կը գտնես . կամ պղծութեան տիղմին մէջ , կամ աղօթքէ հեռու , Եստուած չճանչցող , Եստուծոյ խօսքին զանցառութիւն ընող , ու աս ներկայ աշխարհս սիրող : Իր սիրտը չարութեամբ եռացող , կամ ցանկութեամբ այրող , կամ իր ազահութեանը ետեւէն գացող կը գտնես : Ուրեմն մէկ դի՛ դիր անիկա . իր բաժինը սրբոց հետ չէ . պէտք է որ վերստին ծնանի , պէտք է որ դարձի դայ , ու Յիսուս Քրիստոսով նոր ստեղծուած մը ըլլայ . ապա թէ ոչ՝ երկինքը չկրնար մտնել :

Եմէն դարձի չեկող հոգւոյն վիճակը անանկ անպատմելի կերպով սոսկալի է որ՝ եթէ մէկը միայն կարող ըլլայ դեռ դարձի չեկած ըլլալուն վրայ մարդիկը համոզելու , անմիջապէս պիտի որոշէին որ դարձի դալու գործը լինալու է : Բայց չարացած անձին վրայ անանկ դանդաղութեան և թմրութեան հոգի մը կը տիրէ որ՝ թէպէտ և դարձի չեկած ըլլալուն վրայ համոզուի , սակայն և այնպէս անհոգ կը մնայ տակաւին . և աշխարհային հոգերով ու գործերով , կամ զգայական հեշտութիւններով , ապականեալ ցանկութիւններով , և ցած փափաքներով խղճմտանքին ձայնը կ'ընկղմի . և մեղաւորները՝ քանի մը սլաղ փափաքներ , և զղջումի դալու և աղէկնալու ընդհանուր դիտաւորութենէն անդին չեն անցնիր : Ուստի ջանք կ'ընեմ ցոյց տալու քեզի ,

7 • Ենդարչ վեճակն լընասոյն-լիննը •

1 • Ենհոն Եսոոսաթը քեզի դէմ է՝ քանի որ վերստին ծնած ու նորոգուած չես : Եւ հաւատա՛ որ՝ կենդանի Եստուծոյ ձեռքը իյնալը շատ սոսկալի բան մը ըլլալը պիտի յայտնուի , իր արդար բարկութիւնը քեզի դէմ բորբոքած աւտենը : Եստուծոյ պէս բարեկամ մը չկայ , ոչ ալ անոր պէս թշնամի մը : Որչափ որ երկինքը երկրէն բարձր է , այնչափ ալ որ և իցէ աշխարհային նեղութեան մէջ իյնալէն աւելի սոսկալի պիտի ըլլայ՝ կենդանի և բարկացեալ Եստուծոյ ձեռքը իյնալը : Շատ չանցած բուն Եստուած ինքը պիտի ըլլայ քեզ տանջողը • քու կորուստդ Տէրոջը ներկայութենէն պիտի դայ : Տօփեթը՝ պատժոյ տեղը՝ խորունկ և լայն է • անոր դէզը կրակ և շատ փայտ է • ու զանիկա Տէրոջը շունչը ծծումբի հեղեղի պէս պիտի բռնկցընէ : (Եսայ • Ը • 33 :) Եւ թէ որ Եստուած քեզի դէմ ըլլայ , ո՞վ պիտի ըլլայ քու կողմէդ : Թէ որ մարդ մը Տէրոջը դէմ մեղք դործէ , անոր համար ո՞վ աղաչանք պիտի ընէ : (Խ թագ • ք • 25 :) Մեղաւոր՝ Եստուած քու թշնամիդ ըլլալը լսելդ , քու սրտիդ դաշոյնի մը պէս չմխիբ : Ո՛հ՝ դուն ո՞նք պիտի երթաս : Դուն քեզ ո՞նք պիտի ծածկես : Քեզի յոյս չկայ՝ մինչև որ քու զէնքերդ վար չձգես , և թողութիւն չննդրես , ու Քրիստոս քեզի բարեկամ չկեցընես , և քու խաղաղութիւնդ չընես : Ողորմութիւն և փրկութիւն կ'առաջարկուի քեզի հիմա անոր միջոցովը : Բայց թէ որ

դունքու մեղքերդ չձգես ու բողբոջին Տէրոջը  
չդառնաս : Եստուծոյ բարկութիւնը քու վրայ  
կը մնայ , ու քեզի դէմ ըլլալը կ'իմացնէ : Եզեկի-  
էլ մարգարէին ձեռքովը . « Ենոր համար Տէր Ե-  
հովան այսպէս կ'ըսէ . « Եհա ես քեզի դէմ եմ » :

2 . Բողբոջի « Գործելիքները թեղի դէմ էն :  
Իր Երդարո-Բի-նը վառեալ բոցափայլ սուրի պէս՝  
քեզի դէմ պատեանէն դուրս ելած է : « Թէ որ  
փայլակի պէս սուրս սրեմ , ու ձեռքս դատաստա-  
նի երկնցնեմ , իմ թշնամիներուս վրէժխնդրու-  
թիւն պիտի ընեմ , և զիս ատողներուն հատու-  
ցում ընեմ : Իմ նետերս արիւնով պիտի արբե-  
ցնեմ » : ( ԵՕրէ . ԼԹ . 41 , 42 : ) Եստուածա-  
յին արդարութիւնը շատ ճիշտ է . ամբողջ հա-  
տուցուելու է մինչև վերջին լուման . բարկութիւն  
և սրտմտութիւն կը սպառնայ , նեղութիւն և տա-  
ռապանք՝ ամէն մարդու վրայ որ չար կը դործէ :  
( Հաղ . Թ . 9 : ) Կ'անիծէ « Եմէն մարդ որ Օ-  
րէնքին դիրքը ամէն գրուածներուն մէջ չկենար՝  
որ զանոնք կատարէ » : ( Գաղ . Դ . 10 : ) Են  
մեղաւորը՝ որ տակաւին թողութիւն չէ ստացած , և  
կը զգայ իր թշուառութիւնը , անանկին՝ Եստուծոյ  
արդարութիւնը , աւաղակին՝ Գատաւորին դիմա-  
ցը ելելէն , և ատեանին առջևը ներկայանալէն՝  
կամ մահապարտին՝ դահիճին սուրը , և կամ կա-  
խաղանք տեսնելէն աւելի սոսկալի է : Երբոր ան-  
սահման Երդարութիւնը կենաց կամ մահուան վը-  
ճիռ տալու կը նստի , ո՛հ ինչ սարսափելի բան  
կ'ըլայ թշուառ մեղաւորին վիճակը : « Կասկեցէք



ասոր ոտքերը ու ձեռքերը, և առէք ու հանեցէք զանհկա դուրսի խաւարը. հոն պիտի ըլլայ լալ՝ ու ակռաներ կճռցընել” : (Մատթ. Իբ. 13 :) “Մէկ դի՛ գացէք ինծմէ անիծեալներ՝ յաւիտենական կրակին մէջը” : (Մատթ. Իե. 41 :) Մտածէ՛ ասոնց վրայ՝ աս քու դատուելու խիստ արդարութեանդ համեմատ. և ինչպէս որ կենդանի է Տէր Աստուած՝ աս մահուան վճիռը քեզի դէմ տրուիլը պիտի լսես, թէ որ շուտով դարձի չգաս ու վերստին չճնիս :

Ասասման մեծութիւն ունեցող Աստուծոյ զօրութիւնը, քեզի դէմ է : Իր զօրութեան փառքը պիտի յայտնուի անոնց զարմանալի “Սատակումն վը՛ որ Աստուած չին ճանչնար ու Աւետարանին չին նազանդիր” : (Ի ԹԻՒ. Թ. 8, 9 :) Իր զօրութիւնը պիտի յայտնէ անոնց տրուած պատիժներուն սաստկութիւնովը : (ՀԻՒՎ. Թ. 22 :) Աղէկ կ'ըլլար որ բոլոր աշխարհք քեզի դէմ գէնք առած ըլլային, քան թէ Աստուծոյ ամենակարող զօրութիւնը քեզի դէմ եղած ըլլար : Իր ձեռքէն փախչելու՝ իր բանտէն ազատելու հնարք չկայ : Անոր զօրութեանը որոտումը ո՛վ կրնայ իմանալ : Ապերջանիկ մարդը՝ պիտի անձամբ զգալովը հասկընայ որ, “Աթէ անոր հետ վիճաբանիլ ուղէ, հազարէն մէկուն չկրնար անոր պատասխան տալ : Անհկա ուժով կարող է : Ո՞վ անոր դէմ իր սիրտը խստացուցեր ու յաջողութիւն գտեր է” : (ՅԻԲ. Թ. 3, 4 :) Եւ դուն ասանկ մէկ ամենակարող թշնամի մը պիտի համարձակի՞ն դէմ

Ելելու : Երդ իմացէք ասիկա՝ ինքը կ'ըսէ «Ով  
 դուք Եստուած մոռցողներ , չըլլայ որ ձեզ պատ-  
 ուեմ) և ազատող մըն ալ չգտնուի» : (Սաղ . 8 .  
 22 :) «Վա՛յ անոր՝ որ իր Երարչին հետ կը վե-  
 ճի» : (Եսայ . խե . 9 :) Գիտցի՛ր ասիկա՝ ո՛վ  
 մեղաւոր , սոսկալով՝ որ անսահման Եստուծոյ բո-  
 լոր ստորոգելիքները մէկ տեղ կապակցեալ են՝  
 երդում ըրածի պէս , քու կորստեանդ՝ համար :  
 (Եբր . 7 . 18 :) Եւ դուն ի՞նչ պիտի ընես :  
 Ո՛ւր պիտի փախչիս : Թէ որ ամենատեսն Եստ-  
 ուած ուր ըլլաս կը գտնէ , դուն չես կրնար փախ-  
 չիլ : Թէ որ ճշմարիտ և հաւատարիմն Եստուած՝  
 իր երդումը պիտի կատարէ , դուն պիտի կորսուիս .  
 և թէ որ ամենակարողն Եստուած՝ քեզ տանջե-  
 լու զօրութիւն ունի , դուն բոլորովին թշուառ  
 պիտի ըլլաս՝ թէ՛ մարմնով և թէ՛ հոգւով , բոլոր  
 յաւիտենականութեան մէջ՝ մինչև որ չդառնաս  
 Տէրոջը բոլոր սրտովդ :

Քու բոլոր մեղքիդ յանցանորութեանը լեռան  
 պէս վրադ դիզուած է : Դուն ասիկա չես զգար ,  
 բայց աս է որ քու թշուառութիւնդ վրադ կը  
 հաստատէ : Մեղքը՝ որչափ ալ որ թեթեւ բան  
 մը համարես հիմա , օր մը պիտի հասկընաս որ  
 չներուած մեղքին յանցաւորութիւնը անտա-  
 նելի ծանր բեռ մըն է : Ո՛հ ի՞նչ ըրաւ անիկա  
 Եստուած և մարդ եղող Յիսուս Քրիստոսին :  
 Իր երակներուն մէջէն անգամ արիւնը դուրս մղեց՝  
 և իր սիրաբ փորին մէջ մոմի պէս հալեցուց :  
 (Սաղ . իբ . 14 :) Եւ թէ որ կանաչ ծառին՝

այսինքն՝ սուրբ և անմեղ Փրկչին՝ այնպէս ըրաւ՝  
ինչ պիտի ընէ չոր ծառին, այսինքն՝ քեզի՝ մե-  
ղաւոր, և Եստուծոյ դէմ՝ յանցաւոր ապստամ-  
բիդ՝ որ չոր փայտի պէս, սպառող կրակին յար-  
մար վառելի նիւթ մըն ես։ Ո՛հ՝ ժամանակին աս  
քու վիճակիդ վրայ մտածէ։ Երդեօք առանց դո-  
ղալու կրնաս աս սպառնալիք ներուէն վրայ խորհիլ,  
“Չեր մեղացը մէջ պիտի մեռնիք”։ (Յով. ք. 21։) Ո՛հ՝ բանտի, ստորերկրեայ արգելանոցնե-  
րու մէջ մեռնիլը աւելի աղէկ պիտի ըլլար՝ քան թէ  
քու մեղացդ մէջ մեռնիլը։ Թէ որ մահը՝ ինչպէս  
որ ստուգիւ բոլոր քու հանգստութիւններդ պիտի  
վերցընէ, անանկ ալ թէ որ քու մեղքերդ ալ վեր-  
ցընէր, մեծ ազատութիւն պիտի ըլլար. բայց քու  
մեղքերուդ բոլորն ալ ետևէդ պիտի դան՝ նոյն  
ատենը որ բոլոր բարեկամներդ քեզ կը ձգեն, և  
աշխարհային վայելքներդ ձեռքէդ կ'առնուին։  
Մեղքերդ քու հետդ չպիտի մեռնին, բանտարկ-  
եալի մը պարտքերուն պէս. այլ անոնք քու հե-  
տդ դատաստանի պիտի երթան, հոն՝ քու դատա-  
խազներդ ըլլալու. և անոնք ամէնը քու հետդ դը-  
ժոխք պիտի երթան, հոն՝ քեզ տանջողներն ըլլա-  
լու։ Ո՛հ՝ նայէ ուրեմն պարտաւորութիւններուդ  
վրայ ժամանակին. թէ Եստուծոյ պատուիրանք-  
ներուն ամէն մեկուն դէմ՝ որչափ պարտք ու-  
նիս իր հաշիւին մէջ. և թէ՛ ինչպէս իր սուրբ  
օրէնքներուն ամէն մէկը՝ քեզ դատաւորին մատ-  
նելու պատրաստ է։ Մտածէ՛ ուրեմն թէ ի՞նչ  
պիտի ընես, երբոր անոնց բոլորը մէկէն քու վրայ

իյնան : Քու խղճմտանքիդ աչուըները բայց ասոր վրայ խորունկ մտածելու համար, մինչև որ դուն քէնէ բոլորովին յուսահատիս՝ ու դէպ ՚ի Քրիստոս դիմելու, և ապաստանի տեղ գտնելու, և քու առջևդ դրուած յոյսը ամուր բռնելու համար իրեն վազելու ստիպուիս : (Եբր․ Դ․ 18 :) )

Քու կատաղի ցանկոթիւններդ՝ քեզ թշուառաբար դերի կ'ընեն : Քանի որ դարձի եկած չես, մեղքին բուն ծառան ես․ քու վրադ կը տիրէ անիկա, ու իր իշխանութեանը ներքև կը պահէ քեզ՝ մինչև որ Եստուծոյ ուխտին կապանքներուն մէջ մտնես : Մեղքին պէս անգութ բռնաւոր չկայ : Երգեօք մարդուն սիրտը սաստիկ չ'պիտի վերաւորի՝ տեսնելով որ բազմաթիւ խեղճ արարածներ կը վազեն և կը ճգնին, ամէնքն ալ իրենց այրելուն համար վառելիք նիւթ տանելու : Բայց սակայն մեղքի ծառայողներուն գործը աս է : Մինչև անգամ իրենց անիրաւ շահուն մէջ իրենք զիրենք օրհնողները՝ քանի որ կ'երգեն ու հեշտութեան մէջ կը յղփանան, անոնք միայն բարկութիւն և վրէժխրնդրութիւն կը դիզեն իրենց վրայ․ և իրքև թէ եղ կը թափեն որ բոցը աւելի սաստկանայ : Ո՞վ է որ պիտի ուզէ ասանկ տէրոջ մը ծառայելու որ ասանկ տաժանելի գործ մը ունի, և որուն վարձքը մահ և կործանում է : (Հուով․ Դ․ 23 :) )

Թէպէտ և խղճհոսանքը հիմա քնացած է, բայց երբոր մահն ու դատաստանը խելքդ գլուխդ բերէ՝ ան ատենը պիտի իմանաս ամէն մէկ հարուածքին աննարին սաստկութիւնն ու տառապանքը :

Մեղաւոր ըլլալուն վրայ համոզուած մարդը , մեղքին թշուառ գերութեան աղէկ մէկ օրինակը կըրնայ տալ : Իղճմտանքը իր վրան կը վազէ , ու անոր վախճանը ինչ ըլլալիքը իրեն կ'իմացնէ . բայց տակաւին անանկ գերի մըն է ինք իր ցանկութիւններուն՝ որ դահալէժ առաջ կ'երթայ բաց աչքով , մինչև որ անհուն և յաւիտենական կորստեան մէջն իյնայ : Ի՞նչ կը խորհիս դուն ո՞վ մարդ , ո՞վ կին , յաւիտեանս յաւիտենից դժոխքին մէջ մնալուն վրայով : « Միթէ քու սիրտդ կրնայ դիմանալ , կամ թէ ձեռքերդ կրնան ուժովնալ ան օրերը՝ որ ես ձեզի հատուցում պիտի ընեմ » , կ'ըսէ Օգոստինոսը : Լափող կրակին մէջ կրնա՞ք մնալ , երբոր բոլոր ձեր մարմինն ու հոգին Աստուծոյ ահաւոր վրէժխնդրութեանը ձեռքը իյնայ բոլորովին՝ սաստիկ կրակի մէջ տաքցած կայծեր հանող երկաթի պէս : Իուն մինչև անգամ իր մէկ մատին ուժին տակը կը ճնշիս , ու մեռնելու ուղելու պատրաստ կ'ըլլաս . ուստի ինչպէ՞ս դուն իր Ամենակարող բազկացը ուժին պիտի դիմանաս : Ինչպէս պիտի դիմանաս , երբոր անմահութիւնը՝ քեզի թշուառութիւն , ու անբանի մը մահուամբ մեռնիլն ու ոչնչանալը՝ անանկ երջանկութիւն պիտի ըլլայ , որ բոլոր յաւիտենականութեան մէջի բաղձանքն ու Ովկիանոսի չափ արտասուքը՝ բնաւ ճախու առնելու կարող չպիտի ըլլան : Ըն չար օրը հիմա կրնաս հեռացնել , ու խնդումի և զուարճութեան մէջ ըլլալ , և Տէրոջը երկիւղը մոռնի 4

նալ • բայց ինչպէս դուն պիտի դիմանաս՝ երբոր քեզ տանջանքներու մէջ ձգէ, ու անվախճան ցաւոց մէջ թողու : Մէկ խօսքով • երբոր «տանջանքին ծուխը ելլէ յաւիտեանս յաւիտենից» , ու դուն բնաւ հանգիստ չունենաս՝ ոչ դիշեր ու ոչ ցերեկ , ոչ ալ խղճմտանքի հանգստութիւն , ու ոչ ոսկորներուդ մէջ հանգստութիւն՝ բայց դուն մշտնջենաւորապէս ըլլաս զզուանք ու զարմանք , և անէծք ու նախատինք : Ո՛հ մե՛ղաւոր՝ անմիջապէս կեցի՛ր և միտքդ բեր աս սոսկալի վիճակը : Քու աչուրներդ մի՛ կուրցըներ • կամաւ դուն քեզ մի՛ խաբեր • տես քու ողբալի թշուառութիւնդ , քանի որ դեռ կրնաս առջևն առնել • մտածէ՛ թէ բարկութեան աման ըլլալը ինչ է , որուն մէջ Տէրը իր տանջողական բարկութիւնը պիտի թափէ՝ որչափ ատեն որ ինքը կենդանի է :

Եւ արդեօք ասիկա ճշմարիտ է : Քու թշուառութիւնդ ասիկա՞ է : Ե, յո՛ , ինչպէս որ Եստուծոյ էութիւնը ճշմարիտ է՝ անանկ ալ ասիկա : Եղէկ է որ աչուրներդ բանաս , ու հիմակուց տեսնաս՝ քանի որ դեռ դարման կրնաս ընել , քան թէ կուրցընես դուն քեզ ու կարծրացընես՝ մինչև որ քու յաւիտենական ցաւովդ զգաս ան բաները , որոնց որ առաջ չէիր ուզեր հաւատալ : Եւ քանի որ ասիկա ճշմարիտ է , արդեօք այսպիսի պարագայի մը մէջ կ'ուզե՞ս ժամավաճառ ըլլալ ու տնտնալ : Ո՛հ երանի թէ արթնցընէի աս քնացողը : Ո՛վ է աս մարմինին մէջ բնակողը : Իմա-

ցականութիւն ունեցող բանական հոգի կայ արդեօք անոր մէջ : Բանականութիւն ունեցող հոգի մը ըլլալով , այնչափ անբանութեան վիճակի հասած ես՝ որ քու անմահ ըլլալը մոռնաս , ու երևակայես թէ դուն ալ անասուններուն պէս պիտի կորսուիս : Ո՛վ ապերջանիկ հոգի՝ դուն մարդոց փառքը , հրեշտակներուն բնկերը , ու Աստուծոյ պատկերն էիր • դուն՝ որ աշխարհիս մէջ Աստուծոյ երեսփոխանն էիր , ու երկրի վրայ եղած բոլոր ստեղծուածներուն մէջ գերագոյն պատիւ ունէիր , և քու Արարչիդ բոլոր գործքերուն վրայ իշխանութիւն : Հիմա զգայարանաց գերի ու քու ակործակիդ պէս ցած կուռքի մը ծառայ եղած ես • ու ան ալ չէ թէ գերագոյն երջանկութեան մը համար՝ այլ միայն փոքրիկ աշխարհ մը վաստակելու համար , որն որ քու հոգևոր և անմահ բնութեանդ՝ փայտի տաշուքը և աղբը որչափ որ յարմարութիւն ունին , ան ալ այնչափ ունի : Ո՛հ ինչո՞ւ չես խորհիր թէ յաւիտեանս ուր պիտի ըլլաս : Մահը մօտ է , Գատաւորը դռանը քոյն է : Քիչ մը ատենէն կտե , ալ ժամանակ չպիտի մնայ : Եւ դուն քու անձդ վտանգի մէջ դնելով՝ ասանկ վիճակի մը մէջ պիտի շարունակես , որուն մէջ թէ որ բռնուիս՝ դուն անգարմանելի թշուառութեան մէջ պիտի իյնաս :

Ալի՛ր կանգնէ՛ մէկէն ՚ի մէկ , և փախի՛ր • փախչելու միայն մէկ դուռ մը կայ , ու ան ալ դարձի գալուն նեղ դուռն է : Մինչև որ անկեղծաբար բոլոր քու

մեղքերէդ չդառնաս, ու Յիսուս Քրիստոսի չգաս, ու անիկա չընդունես իբրև քու Մարդարէդ՝ Քահանադ և Թագաւորդ, և սրբութեան ու կենաց նորոգութեան մէջ չքալես, զիտցա՛ճ եղիբ որ՝ ինչպէս որ Տէրը կենդանի է, անանկ ալ քու դժոխքէն դուրս ըլլալը՝ անտարակոյս քանի մը օրէն կամ դիշերէն ետև, անոր մէջն ըլլալէդ աւելի ստոյգ չէ: Ո՛հ Աստուծոյ հետ մի՛ հակառակիր ուրեմն: Ապաշխարէ՛ և դարձի եկուր, որպէս զի ասոնց մէկը քու վրայ չգայ: «Տէրը փնտռեցէք, քանի որ անիկա կը գտնուի. զանիկա կանչեցէք, քանի որ անիկա մօտ է: Թող ամբարիշտը իր ճամբայէն՝ ու անօրէն մարդը իր խորհուրդներէն հրաժարի, և Տէրոջը դառնայ, ու անիկա պիտի ողորմի անոր. ու մեր Աստուծոյն, ինչու որ անիկա առատապէս կը ներէ»: (Եսայ. ԾԵ. 6, 7:)

Թէպէտ և դարձի գալուն հարկաւորութեանը, և դարձի չեկողներուն թշուառութեանը վրայ մինչև հիմա ըսուածները բաւական կրնայ համարուիլ, որ խելքը գլուխը եղող մարդ մը՝ անմիջապէս Աստուծոյ դառնալու հաստատ որոշում՝ ընելու կ'առաջնորդէ, սակայն գիտնալով որ մարդոյս անկեալ վիճակին մէջ՝ իր սիրտը ամէն բանէն աւելի խաբեբայ ու խիստ չար է, հարկաւոր կը սեպեմ՝ անոնց վրայ յաւելցընել,

Է. Դարձի գալու քանի մը որովչ լարժարեմէնէր: Աստուած՝ որ քեզ ստեղծեց, խիստ մեծ բաւ



ըրբարութեամբ քեզ կը հրաւիրէ : Իբր ամենամար-  
դասէր և ողորմած բնո-լի-նը՝ քեզ կը քաջալե-  
քէ իրեն գալու : Ինքը գըթած , երկայնամիտ ու  
բազումողորմ է : (Սաղ . ձի . 15 :) Եսիկա մէկ  
մեծ փաստ մըն է մեղաւորները համոզելու որ դարձի  
գան : «Չեր Տէր Ետուծոյն դարձէք • վասն զի  
անիկա ողորմած ու գթած , երկայնամիտ ու բա-  
զումողորմ է» : (Յովէլ . ր . 13 :) Իբր քաջալերա-  
կան հոգո-մեերն ու խոստո-մեերը՝ ձեզ կը հրաւիրեն :  
Ո՛հ ինչպէս սաստիկ թախանձող մըն է ողոր-  
մութիւնը ձեզի : Ինչպէս սիրով կը կանչէ ձեր  
ետեէն . «Դարձիր ո՛վ ապստամբ Իսրայէլ՝ կ'ըսէ  
Տէրը . իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր •  
քանզի ես ողորմած եմ , կ'ըսէ Տէրը . յաւիտեան  
ոխ չեմ պահեր • միայն թէ քու անօրէնութիւնդ  
ճանչցիր • Ո՛վ ապստամբ որդիք՝ դարձէք , ես ձեր  
ապստամբութիւնները կը բժշկեմ» : (Երեմ . ք .  
12 , 13 • 22 :) Ո՛հ ինչպէս ողորմութեան ամբօրիչ  
խօսքեր են : Եւ արդեօք քու սիրտդ անոնցմով  
չճալիր : Ո՛հ երանի թէ այսօր անոր ձայնը մտիչ  
ընէիր ու նազանդէիր :

Քեզի քաջալերութիւն տալու համար պէտք է  
աս ալ իմացընեմ որ՝ եթէ հիմա դուն Տէրոջը  
դառնաս , ինքը անմիջապէս խիտ մեծ արփօնո-  
լի-ննէր պիտի տայ քեզի : Ինքը պիտի ազատէ  
քեզ՝ բազմաժամանակեայ մեղքերուդ ամէն զօրու-  
թենէն , Սատանային զօրութենէն , ու աս ներկայ  
չար աշխարհիս չարիքներէն ալ : Յաջողութիւնը՝

քեզի մնաս պիտի չընէ ; ու ձախորդութիւնը՝ քու  
 օգուտիդ համար պիտի ըլլայ : Ինքը ժամանակին՝  
 դերեզմանին զօրութենէն ալ պիտի ազատէ քեզ ;  
 ու «Օգարհուրանաց թագաւորը»՝ խաղաղութեան  
 աւետարեբրի մը պէս պիտի ընէ քեզի : Օրէնքին  
 քեզ կալանաւոր բռնելէն պիտի փրկէ ; ու անէճքը՝  
 քեզի օրհնութեան պիտի փոխուի : Ինքը չէ թէ  
 միայն թշուառութենէ պիտի ազատէ քեզ ; այլ նաև  
 ամենառատ բարիքներ պիտի շնորհէ : Քեզի պիտի  
 ընծայէ ինքզինքը ; ու քեզի բարեկամ և հայր պի-  
 տի ըլլայ • ինքը արև ու վահան պիտի ըլլայ քե-  
 ղի • մէկ խօսքով ; ինքը Աստուած պիտի ըլլայ քեզի :  
 Ու ասկէ աւելի ինչ կրնայ ըսուիլ : Քու մարմ-  
 նոյդ վրայ խօսելով՝ ամենևին որ և իցէ աղէկ  
 բանէ քեզ չպիտի զրկէ ; որ աղէկ՝ հարկաւոր  
 և պատշաճ է քեզի : Իսկ քու հոգւոյդ վրայ  
 խօսելով՝ քու մեղացդ թողութիւնն պիտի տայ ;  
 քու անձդ ու ծառայութիւններդ պիտի ընդունէ ;  
 քու աղօթքներդ պիտի լսէ ; ու անոնց պիտի պա-  
 տասխանէ • քեզի փառաց ժառանգութիւնն պիտի  
 տայ ; ու անոր պիտի յարմարցընէ քեզ՝ իր շնորհ-  
 քովն ու Սուրբ Հոգիովը :

Չ • Թէ որ դուն հիմա դարձի գալու կարօտ  
 ըլլալը կ'իմանաս ; ու անոր կը փափագիս ; ես աս  
 տեղ բոլորը կը վերջացընեմ՝ անիկա ձեռք բե-  
 րելու համար՝ մէկ քանի խրատներ ալ յաւել-  
 ցընելով :

1 • Քո- Բղայցի վրայ պէտք է դառն զգացու-  
 ընք

«Կայի՛ր : Մինչև որ յոգնած ու ծանրաբեռնած չըլլաս ու մեղքէն ձանձրանաս , Քրիստոսի չպիտի դաս հանգիստ ու բժշկութիւն դտնելու : Խորհրդածութիւն ըրէ՛ ուրեմն քու մեղացդ թուոյն վրայ : Դաւիթին սիրտը կոտրեցաւ ասոր վրայ մտածելուն : Ատիդ նայէ՛ ու տես թէ՛ ո՞ր տեղն ու ո՞ր ժամանակն էր ան , որ դուն մեղք չգործեցիր : Աերսդ նայէ՛ և տես թէ՛ մարմնոյդ կամ հոգւոյդ մէջ ո՞ր մասը կամ ո՞ր կարողութիւնը կը գտնաս , որ մեղքով թունաւորեալ չէ : Ո՞ր պարտքդ կատարեցիր՝ որ անօրէնութիւնով ապականած չէր : Ա՛հ ինչ մեծ է քու մեղացդ թիւը : Քու հոգիդ որ կը սիրես՝ բարեկամս , մեղքը չնչին կամ թեթեւ բանի տեղ մի՛ դներ : Մեղքին բնութիւնը սորովէ՛ , մինչև որ սկսի քու սիրտդ վախնալու , և անկէ գանելու հակամիտիլ : Քու մասնաւոր մեղքերուդ ծանրութեանը վրայ խորհրդածութիւն ըրէ՛ , թէ ինչպէս՝ Աստուծոյ բոլոր տուած խրատներուն ու պատուիրանքներուն և ողորմութիւններուն դէմ մեղանչեցիր : Բոլոր քու աղօթքներուդ ու խօստմունքներուդ , որոշումներուդ ու սգալուդ , պարտաւորութեան ուխտերուդ և նազանդութեան դէմ ալ : Քու սիրտդ սաստիկ մեղադրես աս բաներուն համար , մինչև որ ամօթով ըլլայ՝ ու դուն քու վրադ ա՛լ չմեծամրտիս : Խորհրդածութիւն ըրէ՛ թէ քու մեղացդ ինչ կը վայէ : Արկինքն ՚ի վեր քեզի դէմ վրէժխնդրութիւն կ'աղաղակէ : Իր արժանաւոր վարձքը մահ

է : Աստուծոյ անէծքը՝ քու հոգւոյդ ու մարմնոյդ վրայ կը բերէ : Խօսքով կամ մտածութիւնով եղած ամենաթեթեւ մեղքը՝ քեզ Ամենակարող Աստուծոյ անհուն բարկութեանը տակ կը ձգէ : Ո՛հ ուրեմն՝ ինչ բարկութեան , ինչ ծանր անէծքի , ինչ սոսկալի վրէժխնդրութեան արժանաւոր կ'ըլլան քու միլիօնաւոր մեղքերդ : Ամէն մեղքերէդ վեր , քու միտքդ՝ քու բնութեանդ մեղքին վրայ հաստատէ : Սորվէ՛ որչափ խորունկ , որչափ տեղադական , որչափ ընդհանուր է քու բնական ապականութիւնդ : Աս է որ քեզ ամէն աղէկ բաներէն ետ կը բռնէ , ու ամէն դէշ բաներու դիւրամէտ կ'ընէ : Ասիկա՛ կուրութիւն և ամբարտաւանութիւն , նախապաշարմունք և անհաւատութիւն բերաւ քու սրտիդ • քու կամացդ՝ շարունակ թշնամութիւն և յամառութիւն • քու յօժարութեանցդ՝ անկարգութիւն և անկանոնութիւն , քու խղճմտանքիդ՝ անզգայութիւն և անհաւատարմութիւն • մէկ խօսքով՝ ասիկա քու հոգւոյդ ամէն մէկ զօրութիւնը կարգէն դուրս հանեց , և սրբութեան բնակարան մը ըլլալու տեղը՝ շարութեան լուալիք մը ըրաւ : Ասիկա պղծեց և խանդարեց բոլոր քու անդամներդ , ու անոնք անիրաւութեան գործիք՝ ու մեղաց ծառայ ըրաւ : Եւ դուն՝ ալ պիտի խօսի՞ս քու աղէկ սրտիդ վրայով : Ո՛հ բնական ապականութեանդ ախտը՝ սաստիկ ծանր ու վտանգաւոր ըլլալուն վրայ խորհրդածութիւն ընելք բնաւ մի՛ ձգեր , մինչև որ խորին պատկառանօք և

ցաւով քու կուրծքդ ծեծես՝ և Յորին պէս ինքզինքէդ զլուխ ու հողի և մոխրի մէջ ապաշխարես :

2. Բայն ըբէ Կրիստոս ինքնապաշխարար ըլլայ խորին զգացում մը Կրիստոսի արարող :

Մտածէ պառկելու ատենդ՝ թէ ես ինչ գիտեմ որ տանջանքներու մէջ չպիտի արթննամ . և արթննալու ատենդ ալ մտածէ որ կարելի չէ՞ թէ յաջորդ գիշերը վրայ չհասած անկողինդ դժոխքին մէջ ձգես :

Եւ ասանկ երկիւղալի վիճակի մը մէջ շարունակել կ'ուզես :

Ենյատակ անդունդին եղերքը դողդողալ կայնիլ, և ամէն դէպքերուն ու հիւանդութիւններու ձեռքը իյնալ՝ քեզ յաւիտենական թշուառութեան խրկելու :

Դիցուք թէ դատապարտեալ մարդ մը՝ Նաբուգոդոնոսորին օտարի վառած նոցին վրայ, մի միայն դերձանով մը կախուած ըլլայ՝ որուն ամէն բոպէ փրթելը նար է :

Քու սիրտդ անոր համար դող չպիտի ելեր :

Ե՛հա՛ դո՛ւն ան մարդն ես : Ե՛ս՝ ճիշդ քու վիճակդ է :

Եւ թէ որ տակաւին դարձի եկած չես :

Եւ թէ որ քու կենացդ թելը կտրի, ինչ պիտի ըլլայ . (և չես ալ գիտեր՝ որ թերեւս կրնայ յաջորդ գիշերը կամ յաջորդ բոպէն ըլլալ .) ո՛ր պիտի ըլլաս ան ատենը . ո՛ր տեղ պիտի իյնաս :

Ո՛ր սորվէ ուրեմն քու թշուառութիւնդ, մինչև որ քու սիրտդ Քրիստոսի աղաղակէ այնպիսի ջերմեռանդութեամբ մը ինչպէս որ խղճուող մարդ մը օգնութիւն, և վերաւորուած մը վերաբոյժ կը խնդրէ :

—

—

—

3. Քու մտքիդ մէջ խորունկ հաստատէ՛ որ դուն ինչպէ՛ս որ փրկելու կարող լիս : Մի խորհիր որ քու աղօթքդ՝ ճշմարտութեան խօսքը կարդալը, լսելը, դաւանելը՝ կամ մինչև անգամ լաւութեան մէջ յառաջանալը՝ պիտի քեզ փրկէ : Իրաւ որ ասոնք ընելու հոգ ասե՛լու ես . բայց թէ որ դուն անոնց վրայ յոյս դնես, պիտի կորսուիս : Թի՛ք որ Քրիստոսէն զատ ուրիշով մը փրկութիւն յուսալը կը շարունակես՝ որ ինքն է «Ղանապարհ, ճշմարտութիւն և կեանք» , դուն մշտնջենաւորապէս կորսուած և կործանուած ես :


4. Ենթադասէ՛ս նի՛նք՝ որ Քոյր Դուքերդ Տէրոջը զօրութեանը : Թի՛ք որ ինչ և իցէ մէկ մեղքի մը սովորութիւն ընելու հակամիտիս, կը կորսուիս : Ունայն տեղը Քրիստոսէն փրկութիւն կը յուսաս, թէ որ չարութենէ չհրաժարիս : Մեղքերդ մէկ դի՛ ձգէ, եթէ ոչ՝ կարելի չէ որ ողորմութիւն գտնես : (Ես. 13 :) Մասնիչէն հրաժարէ՛, ապա թէ ոչ՝ Եստուծոյ հետ խաղաղութիւն չես կրնար ունենալ : Իսպիլան քու ծրնկանդ վրայ մի՛ թողուր . դուն՝ կամ մեղքերէդ հրաժարելու ես, կամ հոգիէդ . մէկ մեղք մը թէ որ միայն պահես, Եստուած չպիտի քեզ իննայէ : Ինաւ պատճառանքներ մի՛ ըներ . քու մեղքերդ մեռնելու են, ապա թէ ոչ՝ դուն անոնց համար պիտի մեռնիս : Թի՛ք որ մէկ մեղքի մը թոյլտուութիւն ընես, թէ և փոքրիկ ալ ըլլայ, գաղտնի ալ ըլլայ՝ թէ և կարօտութիւն կայ կ'ըսես, և


շատ մը պատճառանքներ ունենաս անոր համար, քու հոգւոյդ կենդանութիւնը՝ ան մեղքին կենդանի մնալուն համար, պիտի զոհ երթայ. և արդեօք սուղ ծախու առնուած չըլլայ պիտի:

5. Տէր Յիսուս Քրիստոսը ընդունէ՛ իբրև քու Մարդարէդ, Քահանադ և Թագաւորդ, ինչպէս որ Եւետարանին մէջ առաջարկուած է քեզի: Ո՛վ բարեկամս՝ մեղքով ինքզինքդ ապականեցիր, բայց Յիսուս կարող է և կամեցող և պատրաստ՝ մինչև անգամ հիմա քեզի օգնելու: Ինքը ձրիապէս քեզ փրկել կ'առաջարկէ: Ուստի այսօր քեզի վկայութիւն կու տամ՝ որ եթէ դուն կորսուելու ըլլաս, չէ թէ քեզի համար Փրկկիչ մը պատրաստուած չըլլալուն համար է, կամ չէ թէ քեզի փրկութիւն առաջարկուած չըլլալուն, բայց անոր համար որ՝ Հրէաներուն պէս, մարդասպան մը՝ քու Փրկիչէդ, ու քու ցանկութիւններդ՝ Տէր Յիսուս Քրիստոսէն աւելին նախապատիւ սեպեցիր: Թէ և քու մեղքերդ չափազանց շատ ըլլայ, ու մեծ ու երկար ատենէ ՚ի վեր տեւած ալ ըլլայ, սակայն թէ որ հիմա Եստուծոյ առաջարկութիւնը անդամաբար ետ չձգես՝ քեզի թողութիւն պիտի ըլլայ, ու պիտի փրկուիս. վասն զի Տէր Եստուծոյն բերանը խօսեցաւ ասիկա: Թէ որ կորսուելու ըլլաս, փրկութեան համար Քրիստոսի չգալուդ պատճառաւն է: Բայց ո՛հ՝ քու հոգւոյդ համար ըլլայ՝ խելքդ գլ՛ուխդ բեր վերջապէս, և համոզուէ՛ անիկա ընդունելու իբրև քու

Եմէնդ, քու Փրկիչդ՝ մեղքէ ու թշուառութենէ :  
 Տէրօջը անունովը՝ ու Հոգւոյն զօրութիւնովը՝  
 մարմինի վրայ ունեցած բոլոր վստահութիւնդ մեր-  
 ժելով, ինքզինքդ անոր անպայման կերպով մը  
 յարէ. սրտանց միացուր ուխտով ինքզինքդ Տէ-  
 րօջը բոլորովին իրն ըլլալու, ու փառաւորէ՛ զին-  
 քը քու մարմնոյդ ու քու Հոգւոյդ մէջ՝ որոնք  
 իրենն են, ասանկով քեզի աս աշխարհին ու բո-  
 լոր յաւիտենականութեան մէջ ալ աղէկ պիտի  
 ըլլայ, նոյն Յիսուս Քրիստոսի միջոցովը՝ որ մեր  
 միակ Տէր և Փրկիչն է : Եմէն :







4997-5005

2013

